27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 196 (4576)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ադրբեջանական հիստերիա Թեհրանում




**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Թեհրան**

Շուրջ 40 երկրի մասնակցությամբ ԻԻՀ մայրաքաղաք Թեհրանում մեկնարկեց Մամուլի եւ լրատվական գործակալությունների 17-րդ միջազգային ցուցահանդեսը, որը կտեւի մինչեւ հոկտեմբերի 31-ը: Ավանդական դարձած ցուցահանդեսի նպատակն է մեկ վայրում հավաքել մամուլի ներկայացուցիչներին՝ հնարավորություն ընձեռել մամուլի եւ գրքերի օգնությամբ ներկայացնելու իրենց երկիրը:

Այս անգամ ցուցահանդեսին մասնակցում էին ոչ միայն ԱՊՀ, այլեւ բազմաթիվ՝ աֆրիկյան, լատինամերիկյան, եվրոպական եւ ասիական պետություններ: Հայկական պատվիրակությունը ներկայացնում էին «Ազգ» օրաթերթն ու PanArmenian.net լրատվական գործակալությունը: Հենց ցուցահանդեսի մեկնարկին ադրբեջանական կողմը ներկայացրեց իր ագրեսիվ պահվածքն ու արժանացավ ներկա լրատվամիջոցների բացասական ուշադրությանը:

Իրանական կողմը մասնակից երկրների տաղավարները պատրաստելիս ներկայացրել էր նաեւ տվյալ երկիրը ներկայացնող ազգային խորհրդանիշը: Հայկական տաղավարի համար կազմակերպիչներն ընտրել էին Արցախի խորհրդանիշ՝ Ստեփանակերտում գտնվող «Մենք ենք մեր սարերը» կամ հասարակությանն ավելի հայտնի «Տատի ու պապի» հուշարձանը, որը կատաղեցրեց ոչ միայն ադրբեջանական, այլեւ թուրքական պատվիրակությանը: Ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքների ողջ փուլում ադրբեջանական կողմը գրեթե չէր հեռանում հայկական տաղավարից:

Նրանք ներկայանում էին կամ պատվիրակության անդամների հետ, կամ «ավագ եղբայրներ թուրքերի» աջակցությամբ:

Տես էջ 8

# Հոկտեմբերի 27-ի ողբերգության 11 տարին

Այսօր լրանում է 11 տարին 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ողբերգության, երբ մի խումբ հանցագործներ մտան երկրի Ազգային ժողով եւ գնդակահարեցին խորհրդարանի ղեկավարությանը, երկրի վարչապետին, պատգամավորների: Շատ անգամ ենք գրել, ցավել, ափսոսացել թե՛ զոհվածների ու նրանց հարազատների համար, թե՛ երկրի համար, քանի որ երկրի օրենսդիր եւ գործադիր իշխանության ղեկավարներին ֆիզիկապես ոչնչացնելը չի կարող անհատների դեմ ուղղված հանցագործություն լինել, դա պետության եւ պետականության, նրա սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործություն է:

Երբեւէ երեւի կդառնանք այնպիսի պետություն, որ կհամարձակվենք մասնացույց անել այլ, ավելի հզոր երկրների հատուկ ծառայությունների հետքն այս աննախադեպ հանցագործության շարժառիթների տակ կամ անվանել պատվիրատուներին եւ պատժել նրանց: Վստահ ենք, որ այդ օրն էլ երբեւէ կգա: Կկարողանանք փոխադարձ մեղադրանքների կծիկը քանդել ու մի կողմ դնել եւ գնալ հանցագործությունը վերջապես բացահայտելու ուղիով: Շահարկումներն էլ կմոռացվեն, եւ մենք կըմբռնենք հստակապես, որ երկիրը, նրա խորհրդանիշ պաշտոնյաներին պաշտպանելու գործն իսկապես ազգային անվտանգության եւ պետության հեղինակության խնդիր է: Առայժմ բավարարվում ենք հիշելով, ցավելով եւ ցավակցելով՝ մեր սրտում բազում կասկածներ պահելով: Այսօր էլ այդպես կլինի, այսօր էլ ԱԺ պատգամավորները կհարգեն զոհված պետական այրերի հիշատակը խորհրդարանի այգու հուշաքարի մոտ՝ հանցագործության վերջնական բացահայտման երազանքից, այնուամենայնիվ, չհրաժարվելով:

**Մ. Խ.**




# Հայաստանը կամուրջ՝ ԱՊՀ-ի եւ Իրանի միջեւ

Երեկ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն ընդունեց Իրանում գտնվող ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին: Հանդիպման ընթացքում զրուցակիցները մասնավորապես կարեւորել են հայ-իրանական տնտեսական կապերը քաղաքական հարաբերությունների մակարդակին հասցնելու անհրաժեշտությունը. «Ես հույս ունեմ, որ իմ պաշտոնական այցը նոր լիցք կհաղորդի հայ-իրանական տնտեսական կապերի աշխուժացմանը», նշել է վարչապետ Սարգսյանը: Իրանի նախագահն իր հերթին նկատել է. «Հայաստանի հետ մեր տնտեսական կապերի որակը քաղաքական հարաբերություններին հասցնելու համար որեւէ սահմանափակում չկա, եւ Իրանը պատրաստ է օժանդակել բոլոր նախաձեռնություններին»:




Զրուցակիցները հստակապես կարեւորել են համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, բանկային ոլորտում համագործակցությունը. «Հայաստանը կարող է կամուրջ դառնալ Իրանի եւ ԱՊՀ-ի երկրների միջեւ», նկատել են Հայաստանի վարչապետն ու Իրանի նախագահը:

Վերջում Տիգրան Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով անձամբ Իրանի նախագահին՝ հայ համայնքի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի համար, վերահաստատել է նախագահ Սերժ Սարգսյանի հրավերը Ահմադինեժադին՝ Հայաստան այցելելու վերաբերյալ: Իրանի նախագահն իր հերթին Հայաստանի նախագահին եւ հայ ժողովրդին է փոխանցել իր ամենաջերմ բարեմաղթանքները:

**Հ. Ա.**

# Օրենք խախտելու եւ կաշառակերության մակարդակով առաջատարը դատաիրավապահ մարմիններն են

*Ըստ Քաղաքական եւ սոցիոլոգիական խորհրդակցությունների ինստիտուտի հարցումների*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**Կառավարության, նախարարությունների, պետական այլ կառույցների գործունեության ու կոռուպցիոն դրսեւորումների վերաբերյալ Քաղաքական եւ սոցիոլոգիական խորհրդակցությունների ինստիտուտի անցկացրած հարցումները բնակչության մեջ հետաքրքրական արդյունքներ են ցույց տվել:**

**«Որքա՞ն հաճախ են խախտվում օրենքները հետեւյալ պետական մարմիններում» հարցերի պատասխաններում, 1-10 սանդղակով միջին գնահատականով առաջին երեք տեղերում գտնվում են բուհերը՝ 6 միավոր, հարկային մարմինները եւ դատաիրավապահ մարմինները՝ 5,9-ական միավոր: Դրանց հաջորդում են բուժհաստատությունները՝ 5,7 միավոր, ճանապարհային ոստիկանությունը՝ 5,4 միավոր եւ այլն: Այս նույն հարցին, ենթադրյալ չորս՝ «գրեթե չեն խախտվում», «երբեմն խախտվում են», «հաճախակի խախտվում են», «դժվարացել է գնահատել» պատասխանների մասնանշմամբ, խախտումների առաջատարների ցուցանիշները հետեւյալն են՝ «հաճախակի խախտվում են»՝ 47,8 տոկոս՝ հարկային մարմիններ, 48,5 տոկոս՝ դատաիրավապահ մարմիններ, 48,4 տոկոս՝ բուհեր: Իսկ երկու պատասխանների՝ «հաճախակի խախտվում են» եւ «երբեմն խախտվում են» միավորմամբ, հիմնական օրենքներ խախտողները բնակչության կարծիքով բուհերն են՝ 48,4 տոկոս եւ 22,2 տոկոս, հետո դատաիրավապահ մարմիններն են՝ 48,5 տոկոս եւ 17,8 տոկոս, ապա հարկային մարմինները՝ 47,8 տոկոս եւ 17,7 տոկոս:**

Տես էջ 2

# Սկավառակների «պիրատությունը» բացառող օրենքն ընդունվեց երրորդ ընթերցմամբ

**Երեկ Ազգային ժողովը ձայների ճնշող մեծամասնությամբ երրորդ ընթերցմամբ ընդունեց «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» եւ մի շարք այլ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթը: Այս օրենսդրական նախաձեռնության հեղինակը ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Վարդանյանն է, օրենքը կոչված է պայքարելու տեսաձայնային սկավառակների շուկայում «պիրատության» դեմ, «Ազգն» այդ մասին մանրամասն գրել է նախագծի առաջին ընթերցմամբ ընդունվելիս: Ըստ նախաձեռնության հեղինակի՝ այս կարգի օրենքների ընդունումը բարձրացնում է պետության վարկանիշը, նպաստում է սոցիալական արդարության կայացմանը, քանի որ մշակույթի գործիչներին հնարավորություն է տալիս օգտվելու սեփական աշխատանքի արդյունքներից: Այնուհետեւ որեւէ սկավառակի թողարկման համար, ըստ օրենքի, պարտադիր է ստեղծագործության հեղինակի հետ պայմանագրի առկայությունը: Սա կարեւոր քայլ է նաեւ կոռուպցիայի դեմ պայքարի առումով, քանի որ սահմանափակում է պետական չինովնիկների կողմից այս ապօրինի բիզնեսի հովանավորության հնարավորությունը՝ այն լիովին տեղափոխելով օրինական դաշտ: Մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելը (եկող տարվա մարտի մեկից) տվյալ շուկայում աշխատող բիզնեսմեններին հնարավորություն է տրվում գնելու դրոշմապիտակներ եւ իրենց բիզնեսը տեղափոխել օրինական դաշտ:**

**Մ. Խ.**

# Արեւի ջերմային էներգիան՝ արեւահամ չրում

*Հայաստանի հելիոֆիկացման ծրագրի շնորհանդեսը՝ ներդրումներ գրավելու միջոց*

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Արեւային էներգիան անսպառ աղբյուր է, ներկայի ու ապագայի հիմնական մի միջոց, որ կարելի է օգտագործել էներգիա ստանալու համար՝ այլ միջոցներին զուգահեռ: Երեկ Թեքեյան մշակութային կենտրոնում Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հելիոտեխնիկա, հելիոտեխնոլոգիաներ եւ Հայաստանի հելիոֆիկացում» հակաճգնաժամային ծրագրի շնորհանդեսը, որ վերաբերում էր հենց արեւային էներգիայի կիրառության ոլորտում մի խումբ հայ գիտնականների ձեռքբերումներին:

Տես էջ 3



# Աստրախանյան հանդիպումից հետո Հայաստանը կճանաչի՞ ԼՂՀ-ն

Երեկ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը հարգեց լրագրողների բողոքը եւ եկավ խորհրդարանի լրագրողական հատված՝ լսելու նրանց: Նա նախ հավաստիացրեց, որ ոչ ոք եւ հատկապես ինքը նպատակ չունեն խոչընդոտելու լրագրողների աշխատանքը, հակառակը, ուզում է արդյունավետ դարձնել այն: Տեխնիկական խոչընդոտների մասին մի անգամ եւս լսելով առաջարկները՝ նա խոստացավ ամեն ինչ կարգավորել մինչեւ հաջորդ քառօրյա, բացառությամբ ապակե պատնեշի խնդրի, որով օվալե դահլիճը բաժանվում է լրագրողական օթյակներից: Ապակիները հանելու առաջարկին այլ կերպ նայեց. «Ակուստիկայի, անվտանգության խնդիրների հետ է կապված, կքննարկենք մասնագետների հետ, կտեսնենք՝ ի՞նչ կասեն, բայց մյուս հարցերը, ինչ-որ տեխնիկական, կազմակերպչական բարձրացվել են, բոլորը կբարելավենք: Ես խնդիր չունեմ լրագրողներին չհանդիպելու, ես կողմ եմ, որ ձեր հնարավորությունները որքան հնարավոր է բարելավվեն», ասաց նա: Երբ հակադարձեցինք, թե լրագրողների աշխատանքը շատ է դժվարացել՝ երկար միջանցքներով անընդհատ պետք է վերուվար անենք, նա էլ իր կողմից հակադարձեց. «Դուք էլ մի ուզեք, էլի, աղայավարի ապրել: Ձեզ համար հո չենք կարող միջանցքները կարճացնել: Ձեզ համար առաջ էր լավ, ինձ համար էլ հիմա է լավ»: Չէ, կարճացնել պետք չէ, արհեստականորեն մի երկարացրեք ուղղակի, իսկ աղայավարի, քավ լիցի, թող ապրեն մեր ազգընտիրները, մեզ տարրական հարմարություններ են պետք, ԱԺ նախագահն էլ դրանք խոստացավ: Հ. Աբրահամյանն ասաց, որ մենք չպետք է դժգոհենք վերակառուցված դահլիճից, այլ ողջունենք, քանի որ այն նպաստելու է պատգամավորների արդյունավետ աշխատանքին, մինչդեռ մենք դժգոհում ենք. «Ես սահմանափակում դնելու մտադրություն չունեմ, դրա կարիքն ընդհանրապես չկա, ես ուզում եմ, որ դուք ճշմարիտ լուսաբանեք, ոչ թե լավի մեջ ման գաք մի փոքր բան եւ փորձեք այդ վատը լուսաբանել»:

Լրագրողներս մի քանի հարց ուղղեցինք նաեւ օրակարգային մի շարք հարցերի մասին: «**Ազգը**» հիշեցրեց, որ ԼՂՀ ճանաչման հարցի հետ կապված «Ժառանգության» օրինագծի քվեարկության վերաբերյալ ԱԺ նախագահի ասածը, թե կոալիցիայի հետ կքննարկեն խնդիրը, մինչդեռ Գալուստ Սահակյանն այլ տեսակետ է հնչեցրել. «Ես առաջարկեցի «Ժառանգություն» խմբակցությանը, որ մինչեւ այդ հարցն օրակարգ մտցնելը՝ համաձայնեցնենք կոալիցիոն քաղաքական ուժերի հետ. նրանք չլսեցին իմ խորհուրդը, եւ օգտվելով կանոնակարգ-օրենքի ընձեռած հնարավորություններից՝ այդ նախագիծը մտցրին օրակարգ: Հիմա կոալիցիան, մեր արտաքին գերատեսչության ղեկավարությունը գտնում են այդ հարցի ընդունումն այսօր ոչ նպատակահարմար: Թող ոչ մեկը չփորձի տպավորություն ստեղծել, որ կոալիցիոն ուժերը, արտաքին գործերի նախարարը, ԱԺ նախագահը չեն ուզում ԼՂՀ անկախությունը ճանաչել, ուղղակի մենք չենք ուզում այդ ճանաչումով խաթարել այն բանակցությունները, որոնք ընթանում են այսօր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջոցով... Իսկ որ պահին որ քննարկենք ընդհանուր, երկրի նախագահի գլխավորությամբ որոշենք, որ պետք է ճանաչենք Ղարաբաղի անկախությունը դե յուրե, անպայման մենք շատ արագ կնախաձեռնենք ու արտահերթ նիստով կարող ենք դա անել», ասաց նա: Ճշտող հարց տվեց՝ Աստրախանի հանդիպումից հետո կարո՞ղ է այդպիսի բան տեղի ունենալ, ասենք՝ Սարգսյան-Ալիեւ այսօրվա հանդիպումից հետո Սերժ Սարգսյանն առաջարկի ճանաչել ԼՂՀ անկախությունը. «Եթե նախագահը հանդիպումից հետո մեզ առաջարկի, որ մենք ճանաչենք ԼՂՀ անկախությունը՝ մեծ սիրով», ասաց նա:

Լրագրողներս հիշեցրինք «Լեզվի մասին» օրենքը չփոխելու վերաբերյալ Հ. Աբրահամյանի ելույթը, որից հետո, միեւնույնն է, օտարալեզու դպրոցները բացելու համար այդ օրենքը փոխվում է: Հ. Աբրահամյանը դիմադարձեց, թե իր մոտեցումը չի փոխվել եւ օրենքն էլ չի փոխվում, ուղղակի իրավական խնդիր է լուծվում. ըստ իրավաբանների՝ պետք է անպայման «Լեզվի մասին» օրենքում հղում լինի «Հանրակրթության մասին» օրենքին, այդքանն է միայն: Նրա խոսքից պարզ եղավ նաեւ, որ այդ փաթեթը հավանաբար երկրորդ ընթերցմամբ ոչ թե այս քառօրյայում կքննարկվի, ինչպես նախատեսվում էր, այլ՝ հաջորդ:

Ի դեպ, ԱԺ նախագահը լրագրողներին հանդիպելու էր եկել ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի եւ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիբջանյանի ուղեկցությամբ:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Հ. Գ. Ի դեպ, երեկ ԱԺ հայտարարությունների ժամին ՀՀԿ-ական պատգամավոր Հովհաննես Սահակյանը «Ժառանգության»՝ ԼՂՀ-ն ճանաչելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունն անվանեց նախապես լավ պլանավորված ներկայացում, փորձ՝ վերադարձնելու ընտրողների կորսված վստահությունը, գերխելացի երեւալու սինդրոմի արտահայտություն: Էհ, ով ինչպես կարողանում է՝ ինքնադրսեւորվում է, այդ թվում՝ Հովհաննես Սահակյանն իր այս ձեւակերպումներով:*

# Լայնաշերտ ինտերնետից օգտվողների թիվն ավելացել է

**Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Սամվել Արաբաջյանը երեկ խոսեց լայնաշերտ ինտերնետի դինամիկայի ու միտումների մասին: 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ լայնաշերտ ինտերնետ օգտագործողների թիվը կազմում էր մոտավորապես 71-72 հազար, իսկ ինտերնետից Dial up-ով օգտվողների թիվը կազմում էր 47-50 հազար: Սամվել Արաբաջյանը տեղեկացրեց, որ 2010-ի առաջին կիսամյակի տվյալներով՝ լայնաշերտ ինտերնետից օգտվողների թիվն ավելացել է: Լայնաշերտ ինտերնետից օգտվողների թիվն արդեն հասնում է 125 հազարի՝ Ս. Արաբաջյանը ուրախությամբ նշեց, որ Dial up-ով ինտերնետ օգտագործողների թիվը նվազել է մոտավորապես 2,2 անգամ: Առաջին կիսամյակի տվյալներով՝ Dial up օգտագործողների թիվը կազմել է մոտավորապես 21 հազար, իսկ, առհասարակ, ինտերնետ օգտագործողների թիվը՝ 145 հազար: Ս. Արաբաջյանի փոխանցմամբ, հոկտեմբերի 1-ի դրությամբ, բաժանորդների թիվը դարձյալ ավելացել է. «Այս պահին լայնաշերտ ինտերնետ օգտագործողների թիվը գերազանցում է 160 հազարը»: Ըստ Ս. Արաբաջյանի՝ մեծածախ ինտերնետի սակագները շուրջ 2 անգամ նվազել են: Կախված ընկերություններից եւ փաթեթներից՝ Հայաստանում եւ հարեւան երկրներում՝ Վրաստանում եւ Ադրբեջանում, ինտերնետի սակագները գրեթե նույնն են: «Նույնիսկ որոշ փաթեթների մասով առավելություններ ունենք, այսինքն՝ սակագներն ավելի ցածր են», «Նովոստի» մամուլի կենտրոնում ասաց Սամվել Արաբաջյանը: Որքան էլ զարմանալի է, բանախոսի կարծիքով՝ Հայաստանում ինտերնետի որակը բավականին լավ վիճակում է. «Շատ քիչ երկրներ կան, որոնք ունեն լիարժեք երեքշերտանի ծածկույթ՝ 3 G տեխնոլոգիայով»: Ինչ վերաբերում է շուկայում առկա մրցակցությանը, բանախոսն այն գնահատեց բավականին առողջ:** **Ի. Պ.**

# Թե ինչ է լինում, երբ չես հասցնում մետրոյի վերջին գնացքին

«Բարեկամություն» մետրոյից Հակոբ Հակոբյան փողոց ձգվող քաղաքի այդ հատվածներ հասարակական փոխադրամիջոց չի մտնում: Վերջին տարիներին հայտնված թիվ 72 երթուղային տաքսին եւ ավտոբուսները միակն էին, եւ իհարկե, տվյալ երթուղուց օգտվողների համար՝ առավելություն:

Մետրոյի՝ հիշյալ բնակավայրերին մերձ գտնվելու հանգամանքը անհամեմատ դյուրացնում է այդ թաղամասերի բնակիչների տրանսպորտային խնդիրը, թեեւ վերոհիշյալ՝ Հ. Հակոբյան, նաեւ Քեռու, Ն. Դուման, Ա. Խաչատրյան եւ հարակից այլ փողոցներից բնակիչները ոտքով բավական տարածք ունեն կտրելու, որն առողջությանը նպաստում է, թե ոչ՝ հարաբերական բան է: Ցավոք, մետրոյի աշխատանքը սահմանափակվում է ժամը 23.00-ով, որից հետո ստիպված ես լինում դիմել երթուղային տաքսիների ծառայությանը: Իսկ այդ ժամերին, մանավանդ այս սեզոնին եւ ձմռանը հատկապես, դրանք ուշ-ուշ են հայտնվում, իսկ այդ 72-ը առհասարակ չի երեւում, որի երկարուձիգ երթուղին անցնում է նաեւ Տիգրան Մեծի փողոցով: Օրերից մի օր (հոկտեմբերի 19-ին) մոտակա կանգառ հասնելուս պես, որտեղից որտեղ անմիջապես հայտնվեց: Ճիշտն ասած, ուրախացա, որովհետեւ ժամն արդեն ուշ էր եւ կանգառի՝ «Բարեկամություն» մետրոյից մինչեւ տուն տանող երկար ճամփան ոտքով ստիպված չէի լինելու անցնել: Այդուհանդերձ, նախազգուշականապահովական հարցը տվեցի վարորդին, թե վերջին կանգառը ո՞րն է: Նա թե՝ Քոչարով Մերգելյան ինստիտուտ: Նստեցի: Օպերայի կանգառում նկատեցի, որ միակ ուղեւորն եմ: Չհասցրի իջնեմ, երբ ավտոբուսը Մաշտոցի պողոտայով վեր բարձրանալով, զարմանալի է, բայց թեքվեց միակողմանի երթեւեկության՝ Իսահակյան փողոց ու խցկվեց-մնաց, առանց այդ էլ ոչ լայն այդ փողոցի ու այդտեղով (Պատլավոկի հատվածով) անցնող հսկա սեւ-խորշոր մեքենաների դիմաց՝ ակնհայտ խանգարելով երթեւեկությունը: Մայթին կանգնած ոստիկանը տարօրինակ ժպտում էր: Երեւի մտածում էր՝ «էս ցնդածն ո՞վ ա»: Մի կերպ դուրս պրծնելով՝ սա Տերյանով հասավ Աբովյան փողոց ու Բժշկական համալսարանի կանգառում ինձ թե՝ այսուտեղ իջի, մի բան նստի, գնա: Մնացի ապշած. կեսգիշեր է, փողոցում ո՛չ մարդ է երեւում, ո՛չ մեքենա: «Բայց չէ՞ որ ինքներդ ասացիք, որ Մերգելյան ինստիտուտ եք գնում», անօգուտ ասված խոսքս մութ կերպարանքով վարորդի դեմքի տհաճ ծամածռությունը շարժեց միայն:

Օրեր առաջ այս երթուղագծի սկզբնականգառին, Հ. Հակոբյան փողոցի մթերային խանութի մի աշխատող տրտմում-բողոքում էր հիշյալ երթուղագիծը հանելու մտադրության դեմ եւ մամուլի արձագանք էր ակնկալում՝ կիսատ-պռատ ակնարկելով այդ մասին: Դեպքն իր ոտքով եկավ. եթե նման ձեւով են աշխատում եւ ուղեւոր սպասարկում, լավ է փակել այն:

**Մ. Բ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

## ԿՈՌՈՒՊՑԻԱ

# Հայաստանը 123-րդը 178 երկրների մեջ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպությունը հրապարակել է 2010-ի կոռուպցիայի ընկալման համաթիվը, համաձայն որի՝ Հայաստանը զբաղեցնում է 123-րդ տեղը 178 երկրների շարքում: Մեր երկրի կոռուպցիայի ընկալման համաթվի



(ԿԸՀ) արժեքը կազմել է 2,6: Այս ցուցանիշով լավագույն դիրքերը՝ 1-3-րդ տեղերը, զբաղեցնում են Դանիան, Նոր Զելանդիան եւ Սինգապուրը, որոնց ԿԸՀ արժեքը 9,3 է: ԱՄՆ-ն զբաղեցնում է 22-րդ տեղը 7,1 ԿԸՀ արժեքով: ԱՊՀ երկրներից ամենալավ արդյունքն ունի Վրաստանը՝ 68-րդ տեղ՝ 3,8 ԿԸՀ արժեք, այնուհետեւ Ղազախստանն ու Մոլդովան 105-րդ տեղում են 2,9 ԿԸՀ արժեքով: ԱՊՀ մյուս երկրները Հայաստանից ավելի վատ դիրքերում են: Բելառուսը զբաղեցնում է 127-րդ տեղը՝ 2,5 ԿԸՀ արժեքով, Ադրբեջանը եւ Ուկրաինան 134-րդ տեղը՝ 2,4 ԿԸՀ արժեքով, Ռուսաստանը եւ Տաջիկստանը մի շարք այլ երկրների հետ կիսում են՝ 154-րդ տեղը 2,1 ԿԸՀ արժեքով, Թուրքմենստանն ու Ուզբեկստանը Սուդանի հետ կիսում են 172-րդ տեղը՝ 1,6 ԿԸՀ արժեքով: **Ա. Մ.**

# Օրենք խախտելու եւ կաշառակերության մակարդակով ...

*1-ին էջից*

«Վերջին 1 տարվա ընթացքում կաշառակերության մակարդակը նվազե՞լ է, մնացե՞լ է նույնը, թե՞ աճել է» հարցին դատաիրավապահ մարմինների վերաբերյալ «աճել է» եւ «մնացել է նույնը» պատասխանները տվել են հարցվողների միասին վերցրած 78,2 տոկոսը: Ընդ որում, 34 տոկոսն ասել է, որ աճել է, իսկ 44,2 տոկոսը՝ որ մնացել է նույնը: Հարկային մարմիններում կաշառակերության վերաբերյալ հարցին այս պատասխանները տվել են հարցվողների համապատասխանաբար՝ 33,6 տոկոսը եւ 38,2 տոկոսը: Բուհերի վերաբերյալ «աճել է» պատասխանը տվել է հարցվողների 37,7 տոկոսը, «մնացել է նույնը»՝ 36,9 տոկոսը:

Փաստորեն, օրենք խախտողների ցանկում երկրորդ տեղը զբաղեցնում են օրենք պաշտպանելուն կոչված դատաիրավապահ մարմինները, ինչը, առանց չափազանցության, մեր երկրի առջեւ ծառացած ամենադժվար լուծելի խնդիրներից է: Ավելին, վերոնշյալ ոլորտն արդեն առաջին տեղն է զբաղեցնում կաշառակերության բարձր մակարդակով: Մեկնաբանություններն այստեղ թերեւս ավելորդ են:

# Հայ-ռումինական համագործակցություն մշակույթի ոլորտում

Ռումինիայի մշակույթի եւ ազգային ժառանգության նախարար **Հունոր Կելեմենը** հոկտեմբերի 15-ին ընդունել է Հայաստանի դեսպան **Համլետ Գասպարյանին**: Զրույցի ընթացքում նախարարն ու դեսպանն անդրադարձել են մշակույթի բնագավառում երկկողմ համագործակցության հարցերին, խոսել մի շարք ծրագրերի վերաբերյալ: Հունոր Կելեմենն ու Համլետ Գասպարյանը բարձր են գնահատել Ռումինիայի կառավարության մշտական աջակցությունը, մասնավորապես ռումինահայոց պատմամշակութային ժառանգության պահպանման եւ զարգացման գործում: Նրանք պայմանավորվել են առաջիկայում համատեղ ծրագրեր նախաձեռնել ռումինահայոց պատմամշակութային ժառանգության գիտական գնահատման եւ հասարակությանը պատշաճ ներկայացնելու ուղղությամբ: **Ի. Պ.**

# 1 տոկոս բաժնեմասի դիմաց՝ 5 տոկոս վարկեր

## *Ստացել է Հայաստանը Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկից*

Հայաստանում այս օրերին գտնվող Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի նախագահ **Անդրեյ Կոնդակովը** երեկ հանդիպեց լրագրողներին: Մամուլի ասուլիսին մասնակցում էր նաեւ Հայաստանի ֆինանսների փոխնախարար, բանկում մեր երկիրը ներկայացնող **Վարդան Արամյանը**:



Անդրեյ Կոնդակովը, անդրադառնալով բանկի ստեղծմանը եւ գործունեությանը, հայտնեց, որ 1999-ից բանկը իր հիմնադիր անդամ 11 երկրներում իրականացրել է ընդհանուր առմամբ 169 ծրագրեր՝ 3 մլրդ դոլար արժողությամբ: 2009-ի տարեվերջի դրությամբ, բանկի վարկային պորտֆելը 1,5 մլրդ դոլար է: Ըստ Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի նախագահի, 3 շաբաթ առաջ միջազգային վարկանիշային «Մուդիս» գործակալությունը բանկին շնորհել է ամենաբարձր՝ AAA վարկանիշը: Անդրեյ Կոնդակովը նաեւ նշեց, որ ճգնաժամը բանկի վրա ուժեղ ազդեցություն չի ունեցել, եւ անկախ դրանից, վերջին երեք տարիներին բանկն աշխատել է շահույթով: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեր երկիրը այդ բանկի 1 տոկոսի բաժնետերը լինելով, բանկային պորտֆելում ունի 5 տոկոս մասնակցություն: Այսինքն, մեր երկրում իրականացվել են այդ ծավալի վարկային ծրագրեր, որը գումարային առումով կազմում է ավելի քան 70 մլն դոլար:

Անդրադառնալով Հայաստանում բանկի իրականացրած ծրագրերին, Վարդան Արամյանն ասաց, որ այդ գումարներով իրականացվել է փոքր եւ միջին ձեռնարկությունների, արդյունաբերության ոլորտի ֆինանսավորում, որն ուղղված է եղել տնտեսության դիվերսիֆիկացմանը եւ արտահանման խթանմանը:

Անդրեյ Կոնդակովը ավելացրեց, որ, բացի ՓՄՁ ֆինանսավորումից, Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկը մասնակցություն է ունենալու ձեռնարկությունների կապիտալում: Նման մի ծրագրի շուրջն այժմ բանակցություններ են ընթանում: Այն վերաբերում է բալկանյան երկրներում գործող եւ կովկասյան երկրներում ներդրումներ կատարելու մտադրություն ունեցող ներդրումային հիմնադրամում բանկի մասնակցությանը: Բացի այդ, Սեւծովյան բանկը առաջիկայում պայմանագրեր կստորագրի երեք հայկական բանկերին միջոցներ տրամադրելու վերաբերյալ: Արդեն մեկ անգամ վարկ ստացած սննդարդյունաբերական ընկերությունը դիմել է բանկին եւս մեկ վարկ տրամադրելու համար: Հայաստանի անշարժ գույքի շուկայում առաջիկայում հնարավոր է բանկի մասնակցությունը որոշ նախագծերի:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

«ԱՄԵՐԻԱ» ԲԱՆԿ

# Բանկային ոլորտի նորարարի համար 100 տարին դեռ սկիզբն է

**Որոշ ցուցանիշներով՝ առաջինը, որոշներով՝ երկրորդ բանկը Հայաստանում «Ամերիա» բանկն է՝ 32,2 մլրդ դրամ ընդհանուր կապիտալով: Վարկային պորտֆելի մեծությամբ՝ 88,4 մլրդ դրամ, օրինակ, բանկը Հայաստանում առաջատարն է: «Ամերիա» բանկը ֆինանսական շուկայում ընթացիկ տարում արդեն իսկ արձանագրել է 147,7 տոկոս աճ՝ ապահովվելով շուկայում ընդհանուր ներդրումների 10,5 տոկոսը:**



**Երեկ կայացած ասուլիսում բանկի զարգացման գծով տնօրեն Տիգրան Ջրբաշյանը ընդգծեց, որ «Ամերիա» բանկը մշտապես հանդես է եկել նորարարություններով՝ ամենատարբեր տեսակի: Բանախոսը վստահություն հայտնեց, որ տարվա չորրորդ եռամսյակը նույնպես բանկի համար կանցնի բավական ակտիվ. «Դեռեւս տարեսկզբին մենք նշեցինք, որ կլինենք Հայաստանի բանկային համակարգի առաջատար եռյակում. այսօր մենք երկրորդն ենք, իսկ որոշ ցուցանիշներով նույնիսկ առաջատարը: Աստիճանաբար ավելանում են մեր նաեւ ֆիզիկական վարկառուները, ինչը խոսում է մեր վստահության պաշարի մասին», նշեց Ջրբաշյանը:**

**Իսկ այս ամենը սկսվել է 100 տարի առաջ, երբ 1910-ին դեռեւս Երեւանում սկսեց լիարժեք գործել 1895-ին բացված՝ Թիֆլիսի կոմերցիոն բանկի երեւանյան մասնաճյուղը. «Այս տարեթիվը մենք համարում ենք մեր պատմության սկիզբ», ընդգծեց Ջրբաշյանը: Այնուհետեւ՝ 500 հազար ռուբլի հիմնադիր կապիտալ ունեցող «երեւանյան մասնաճյուղը» աստիճանաբար դառնում է Հայաստանի առաջին հանրապետության կառավարության ամենամեծ ֆինանսական գործընկերը: Բոլշեւիկյան իշխանության սկզբնական տարիներին «երեւանյան մասնաճյուղը» դառնում է պետական բանկի մասնաճյուղ. «Հետո որոշվեց բանկի հիման վրա ստեղծել կոմունալ բանկ, այնուհետեւ՝ «շինարարական բանկ», ներկայացրեց Ջրբաշյանը: 1974-ին 100-ամյա պատմությամբ բանկը անվանվում է «Մեժտորգբանկ», 1988-ին՝ «Մեժէկոնոմբանկ»: Այսօր արդեն կոչվում է «Ամերիա» բանկ: Հայաստանի միակ՝ 100-ամյա պատմություն ունեցող բանկի զարգացման գծով տնօրեն Ջրբաշյանը ընդգծեց, որ «Ամերիա» բանկը իր գործընկերների համար նախատեսել է 100 անակնկալ. «Դրանց մասին մենք կիրազեկենք արդեն հաջորդ տարվանից», ասաց Ջրբաշյանը՝ մանրամասնելով միայն, որ «Ամերիա» բանկը շուտով, հավատարիմ մնալով բանկային ոլորտի նորարարի իր կոչմանը, շուկա կներմուծի նոր վարկային ծրագիր, որը երբեւէ չի գործարկվել Հայաստանում. «Ես վստահեցնում եմ՝ 100 տարին դեռ սկիզբն է», եզրափակեց Տիգրան Ջրբաշյանը:**

Հ. Ա.

# Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի նախագահի հանդիպումը «Արդշինինվեստբանկում»

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի պատվիրակությունը՝ բանկի նախագահ Անդրեյ Կոնդակովի գլխավորությամբ, երեկ աշխատանքային հանդիպում է ունեցել «Արդշինինվեստբանկի» խորհրդի նախագահ **Կարեն Սաֆարյանի** եւ վարչության նախագահ **Ներսես Կարամանուկյանի** հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են «Արդշինինվեստբանկին» վարկային միջոցների ուղղակի տրամադրման, փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորման հարցեր, առեւտրի գլոբալ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «Արդշինինվեստբանկում» լիզինգային գործունեության ծավալման եւ ընդլայնման ոլորտներին առնչվող հարցեր:

«Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանի խոսքերով. «Ուրախ կլինենք համագործակցել Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի հետ, քանի որ դա հնարավորություն կտա մեզ նպաստելու Հայաստանի ինչպես փոքր եւ միջին բիզնեսի ձեռնարկությունների, այնպես էլ հանրապետության տնտեսության տարբեր ոլորտները ներկայացնող խոշոր ձեռնարկությունների զարգացմանը: Բանկը շարունակաբար զարգացնելու է համագործակցության շրջանակները միջազգային ֆինանսական կառույցների հետ՝ ֆինանսական միջոցներ ներգրավելու եւ Հայաստանի տնտեսության կայունությանն աջակցելու նպատակով»:

Ա. Մ.

# Արդարադատության նախարարության հայտարարությունը

**Որոշ լրատվամիջոցներից, անգամ քաղաքական գործիչներից կարելի է տեղեկանալ, որ Երեւան ժամանած ԱՄՆ դաշնային հետաքննությունների բյուրոյի խումբը ուսումնասիրություններ է անում հանրապետության նոտարական գրասենյակներում՝ պարզելու ԱՄՆ-ում բացահայտված հայկական հանցավոր խմբի կապերը ՀՀ-ի հետ: Այս կապակցությամբ երեկ արդարադատության նախարարությունը տարածել է հաղորդագրություն, որտեղ մասնավորապես նշված է. ««Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը դատախազին, քննիչին կամ հետաքննության մարմնին նոտարական գործողությունների վերաբերյալ տեղեկանքներ, նոտարական գործից քաղվածքներ, պատճեններ, կամ բնօրինակներ տալն արգելում է: Սակայն նման պահանջը կարող է բավարարվել, եթե այդ իրավասու պաշտոնատար անձանց վարույթում է գտնվում հիշյալ տեղեկությանն առնչվող կոնկրետ քաղաքացիական եւ քրեական գործ, կամ եթե վերջիններս՝ միջազգային համաձայնագրերին համապատասխան, կատարում են քննչական կամ դատական հանձնարարություններ: Տվյալ պարագայում դրանցից որեւէ մեկը առկա չէ, հետեւաբար որոշ լրատվամիջոցներ տարածել են անհիմն տեղեկություններ, որ ԱՄՆ-ի հետաքննության բյուրոյի խումբը ուսումնասիրություններ է անում ՀՀ նոտարական գրասենյակներում՝ կապված վերջերս ԱՄՆ-ում բացահայտված հայկական հանցավոր խմբի հետ»:**

Հ. Ա.

# Արեւի ջերմային էներգիան՝ արեւահամ չրում

*1-ին էջից*

«**Ազգ**» օրաթերթի խմբագիր, ԱՌԱԿ ատենապետ **Հակոբ Ավետիքյանի** ներկայացմամբ, կուսակցությունն ընդառաջել է մի նախաձեռնության, որն առաջին հայացքից միայն քաղաքական չէ: Ավետիքյանի խոսքերով, շնորհանդեսի թեման առավել քան քաղաքական է, քանի որ վերաբերում է էներգիայի այլընտրանքային աղբյուրներին:

Ներկայացնելով նախաձեռնության գիտնականներին՝ Հակոբ Ավետիքյանը նշեց, որ նրանք հաջողությամբ Աբովյան քաղաքի մոտ փորձարան են ստեղծել, փորձարկումներ են արվում, գյուտեր կիրառվում: «Հայաստանում էներգիան միշտ թանկ կլինի, սա անխուսափելի է», ասաց Ավետիքյանն, ավելացնելով, որ դա հրամայական է դարձնում արեւի էներգիայի օգտագործման ուղիների որոնումը: Այս շնորհանդեսի կազմակերպմամբ կուսակցությունը նպատակ է հետապնդում հասարակական կարծիք ձեւավորել հելիոնորությունների նկատմամբ եւ հետաքրքրություն առաջացնել, որոնք կարտահայտվեն այս նախագծում ներդրումների տեսքով:

Հակաճգնաժամային ծրագրի ղեկավար, տեխնիկական գիտությունների դոկտոր Վահան Համազասպյանը ներկայացրեց ծրագրի նախապատմությունն ու անցած ուղին, նշելով, որ Հայաստանի հելիոֆիկացման ծրագիրն անձնական նախաձեռնության կարգով հեռավոր 1993 թվականին մշակեցին մի խումբ մասնագետներ: Իսկ թե ինչու նման ծրագրի անհրաժեշտություն առաջացավ, Համազասպյանն արդեն ներկայացրել է «**Ազգի**» ընթերցողներին, հիշեցնենք միայն, որ այն համաճգնաժամային է, ուստի խնդիր կա ելք գտնելու Հայաստանի էներգետիկ հարցերի լուծման հարցում:

Համազասպյանը նշեց արեւային էներգիայի օգտագործման մի շարք առավելություններ, որոնցից հատկապես կարեւոր է նախ այն, որ արեւային էներգետիկան ունի բաշխված համակարգեր այն դեպքում, երբ մյուսները կիրառում են կենտրոնացված համակարգեր՝ ուղեկից վտանգներով հանդերձ: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ այլ պայմանների դեպքում արեւային էներգիան Հայաստանը կարող է օգտագործել՝ անկախ շրջափակումներից, էներգետիկ ճգնաժամերից եւ այլն:

Գիտնականի համոզմամբ, արեւային ջերմաէներգիան օգտագործելը բավականին էժան ռեսուրս է, ինչպես նաեւ հնարավոր է կազմակերպել այս էներգիայի օգտագործման էժան սարքավորումներ, հատկապես որ դրանց ջերմային էներգիայով կարելի է ավելի առողջարար, համեղ կերակուրներ պատրաստել, կիրառել կենցաղային այլ ոլորտներում: Ընդ որում, կարեւոր է, որ շփոթություն չլինի արեւային էլեկտրաէներգիայի եւ ջերմային էներգիայի ստացման հարցում, քանի որ վերջինս շատ ավելի էժան է ինչպես ստացման, այնպես էլ այս էներգիան ստացող սարքավորումների առումով:

Շնորհանդեսին մասնակցում էին տարբեր կուսակցությունների, գիտական շրջանակների ներկայացուցիչներ, որոնց հետաքրքրող հարցերը վերաբերում էին հիմնականում հակաճգնաժամային այս ծրագրում ներկայացվող նորարարությունների պատենտավորմանը, աշխարհում նման անալոգների առկայությանը, այլ ռեսուրսների տեխնոլոգիաների հետ համադրելիությանը: Համազասպյանը պարզաբանեց, որ պատենտավորման հարցը դեռեւս արդիական չէ, քանի որ շատ նորարարություններ դեռեւս չի կարելի հրապարակել: Ինչ վերաբերում է այլ ռեսուրսների հետ համադրմանը, ապա արեւային ջերմաէներգիան կարող է քաղաքացուն մինչեւ 60 տոկոս խնայողություն ապահովել:

Շնորհանդեսի մասնակիցները հետաքրքրվեցին նաեւ, թե ինչպես են արձագանքել հայաստանյան իշխանությունները, մասնավորապես՝ կրթության, գիտության եւ էկոնոմիկայի նախարարությունները հայ գիտնականների այս նորարարություններին: Վահան Համազասպյանն արձագանքեց, որ նշված նախարարությունների ղեկավարները երեխայական վերաբերմունք են ցուցաբերում, քանիցս խոստանում, բայց այդպես էլ չեն այցելում անգամ Աբովյան քաղաքում գործող փորձարան: Թեեւ սրա կողքին, Համազասպյանի շեշտադրմամբ, դեռեւս 2008 թվականին ծրագիրը ներկայացվել է Հայաստանի կառավարություն, որից այդպես էլ արձագանք չկա: Հարցին, թե արդյոք ծրագրային տեսքով առաջարկություն ներկայացվե՞լ է որեւէ նախարարություն, Համազասպյանը պարզաբանեց, որ հենց նախարարների մոտեցումն այնքան անլուրջ է, որ ծրագրի հեղինակները չեն մտածել նախարարություններ նախագիծ ներկայացնելու մասին: Թեեւ, այդուհանդերձ, Հայաստանի կառավարությունն ունի այս ծրագիրը:

Ամեն դեպքում, այն չիրը, որ ստացվում է գիտնականների այս խմբի աշխատանքների շնորհիվ, աշխարհի ավելի քան 60 ցուցահանդեսներում զարմացրել է համախորդներին իր համային որակներով եւ հատկապես այն հանգամանքով, որ պատրաստվում է առանց շաքարի: Եվ եթե հավատալու լինենք գերմանական հետազոտություններին, ապա արեւային էներգիայով պատրաստված կերակուրը որեւէ կերպ չի կարող նպաստել քաղցկեղային հիվանդություններին այն դեպքում, երբ ուղղակի կրակի վրա պատրաստվածը հավանական է դարձնում նման հիվանդությունների առաջացումն ու զարգացումը:

# Մամուլի հաւաստիութեան համար

Հայրենի լրատուամիջոցներէն շատեր վարքագծային հետեւողականութեամբ կը շարունակեն ծայրայեղօրէն քաղաքականացնել իւրաքանչիւր իրադրութիւն: Մեկնաբանութիւնները իւրաքանչիւր պատահարի գերքաղաքական են եւ ընդգծուած ձեւով միայն բացասական երանգներ կը հաղորդեն Հայաստանի արտաքին թէ ներքին քաղաքական դաշտերուն վրայ արձանագրուող դիպաշարերուն:

Առարկայական լրատուութիւնը տեղը զիջած է սուր քարոզչութեան կամ հակաքարոզչութեան: Եւ եթէ տուեալ քարոզչամիջոցը կովկասեան Զուիցերիա կ՚ուզէ ներկայացնել մեր երկիրը, ապա շատ շատեր միայն մութ գոյնի ակնոցով կ՚ուզեն դիտել իւրաքանչիւր իրադրութիւն:

Ընդդիմադիր լրատուադաշտի նկատառելի թիւով ներկայացուցիչներ ցնծութիւն ապրելու տպաւորութիւնը կը ձգէին, երբ միջազգային ատեաններու մէջ հակահայ բանաձեւեր կ՚որդեգրուէին: Եւ տրուած ըլլալով, որ դեղատոմսեր չէին առաջարկուեր, այլ միայն կը հարուածուէր պետութեան արտաքին քաղաքականութեան վարչակառավարման դրութիւնը, համոզիչ կը դառնար որ իշխանութիւն-ընդդիմութիւն մրցապայքարին մէջ պարզապէս առաւելներ շահելու պահի օգտագործում էր եղածը: Ի հարկէ, նկատառելի թուլութիւն կար Հայաստանի արտաքին քաղաքականութեան գերատեսչութեան գործունէութեան, հարցերուն հետեւելու, հակազդելու եւ նախաձեռնելու ուղղութիւններուն մէջ: Առարկայական գնահատականի փորձը սակայն այս բացթողումներին կողքին պիտի տեսնէր նաեւ հակառակորդին արտակարգ աշխուժացումը եւ անոր առընթեր միջազգային քաղաքականութեան համապատասխան ենթահողի ձեւաւորումը: Երկրորդ բաժինը չտեսնելը եւ մանաւանդ դեղատոմս չառաջարկելը՝ արտաքին հակառակորդի դիւանագիտական-քաղաքական մարտահրաւէրներուն դիմաց համախմբուելու անհրաժեշտութիւնը ընդգծելով, կը մնայ արդէն սեւագրէքեան վարքագիծի շարժառիթները: Ի վերջոյ արձանագրուածը հարուած է պետութեան եւ ոչ թէ սոսկ իշխանութիւններուն:

Անցնինք ներքին ոլորտ: Միացեալ Նահանգներու մէջ վերջերս բացայայտուած նիւթական հսկայ զայթակղութիւնը շատ հասկնալիօրէն գրաւած է հայկական լրատուամիջոցներու թողարկած լրատուութիւններուն առաջին հորիզոնականները: Յայտնաբար տակաւին գաղտնազերծելի նիւթեր, թղթածրարներ գոյութիւն ունին: Տարատեսակ կարծիքներ չկան, թէ նման արարքներ կ՚աղաւաղեն հայութեան հաւաքական նկարագիրը, տպաւորութիւն-համոզում կը կազմեն տեղւոյն հասարակութիւններուն մօտ հայ զանգուածին նկատմամբ աւելիով ամրացնելով արդէն իսկ ձեւաւորուած կարծրատիպերը այս մասին: Յանցագործները, ամբաստանութիւնները հաստատուելու պարագային, արժանի են ամենածանր դատապարտանքի:

Այս հսկայ զայթակղութեան մասին մեկնաբանական լրատուութիւնները հոս կանգ չեն առներ սակայն: Գերքաղաքականացման փորձութիւնները իրենք զիրենք կը պարտադրեն եւ տակաւին տեղւոյն իրաւապահ կամ դատական մարմիններու կողմէ առանց որեւէ նախնական յայտարարութեան սպասելու հարա-հրոցը կը սկսի հայկական կողմն աշխարհի: Լրագրողական հարթութեան վրայ փհուկներու որսի կը ձեռնարկուի հասնելու համար ներիշխանական ոլորտներ՝ այնտեղ որոնելու համար յանցագործներուն գործընկերները կամ ուղղակի գործին պատասխանատուները: Ի հարկ է չէ բացառուած, որ նմանատիպ եզրայանգումներ կատարուին: Սակայն խնդիրը ժամանակէն առաջ հրապարակ գալով ակնկալե՛լն է, որ այդպիսի բան պատահի: Որ խայտառակութիւնը չսահմանափակուի Քալիֆորնիոյ մէջ, հասնի Երեւան: Հասնելով Երեւան առիթի վերածուի, որ արտաքին ճնշումները շատնան Հայաստանի պետութեան վրայ:

Այժմ ռազմական ոլորտ: Հայկական բանակին մէջ արձանագրուող պատահարները իւրաքանչիւր հայու համար մտահոգութիւն են, ցաւ: Կտրուկ միջամտութիւններով անհրաժեշտութիւնը կը զգացուի հնարաւորինս կանխարգիլելու նման երեւոյթներու ծաւալումը: Հրադադարի անվերջանալի խախտումներու, ազրպէյճանական սադրիչ գործողութիւններու վերսկսման, ռազմատենչ հռետորաբանութեան զարգացման եւ պատերազմի վերսկսման հաւանականութեան բարձրացման ընդհանուր մթնոլորտին մէջ թոյլատրելի չեն բարոյահոգեբանական անկումի առաջնորդող նման պատահարները: Նոյնքան եւ աւելի սակայն թոյլատրելի չէ տակաւին պատերազմական կարգավիճակի մէջ գտնուող մեր երկրի բանակը վատաբանելը, քաղաքական առաւելներ շահելու համար բանակի մարտունակութիւնը խնդրոյ առարկայ դարձնելը, խծբծելը: Այս մօտեցումները հեռու են կառուցողականութենէ. հեռու են սրբագրութեան միտումէ:

Նշուածները պարզապէս ամենահրատապ խնդիրներուն կը վերաբերին: Այլ օրինակներ կան եւ կը թուի, թէ պիտի ըլլան տակաւին: Պետութիւնն ու իշխանութիւնները գիտակցօրէն սահմանազատելու անհրաժեշտութիւնը ինքնին զգալի կը դառնայ: Խծբծանքն ու կառուցողական քննադատութիւնը իրարմէ տարբերելը արդարօրէն ակնկալելի է: Այլապէս, միայն ծայրայեղ բացասական երանգներ հաղորդելու այսօրուան մօտեցումները խնդրոյ առարկայ կը դարձնեն մամուլի կամ լրատուամիջոցի հաւաստիութիւնը: Իսկ հաւաստի, ազատ եւ պատասխանատու մամուլը անհրաժեշտ է քաղաքացիական առողջ հասարակարգի կայացման համար: Անիկա իր կարգին՝ հզօր, ժողովրդավար պետութեան համար:

ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ
«Ազդակ»-ի գլխաւոր խմբագիր
Պէյրութ

ԱՄՆ

# Ամերիկահայերը պետք է քվեարկեն հայամետ թեկնածուների օգտին

**Նոյեմբերի 2-ին Մ. Նահանգներում սպասվում են կոնգրեսական տեղերի ընտրություններ: Եվ տարբեր գնահատականների համաձայն, այդ ընտրությունները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Մ. Նահանգների ներքին քաղաքական իրականության տեսանկյունից: Այդ դեպքում, հայերն Ամերիկայում կարծես պետք է եւ անհրաժեշտ, որ դրանցում իրենց լուրջ դերակատարությունն ու մասնակցությունը բերեն:**

**Այս հարցին էր անդրադարձել «Կալիֆոռնիա կուրիեր» պարբերականի խմբագիր Հարութ Սասունյանն իր վերջին հոդվածում: Նրա մատուցմամբ, ամերիկահայերի համար լավագույն ընտրությունը այն թեկնածուների համար քվեարկությունն է, որոնք հայկական հարցերին աջակցության լուրջ փորձ եւ գործունեություն ունեն: Սասունյանի ներկայացմամբ, հրեաները, աֆրոամերիկացիները, իսպանախոսները, թուրքերը եւ այլ էթնիկ խմբերն ԱՄՆ-ում քվեարկում են այն թեկնածուների օգտին, որոնք աջակցում եւ նպաստում են նրանց շահերի պաշտպանությանն ու հարցերի լուծմանը:**

**Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ Սասունյանը հարցադրում է անում, թե ինչո՞ւ պետք է հայերը բացառություն լինեն եւ խուսափեն աջակցել այն թեկնածուներին, որոնք միտված են պաշտպանելու հայկական շահը: «Ամերիկահայերը կարող են իրենց բարեկամներին պահել Կոնգրեսում վերընտրելով Ամերիկայի Հայկական հանձնախմբի կողմից բարձր վարկի արժանացածներին», գրել է Սասունյանը: Ըստ որում, դրան զուգահեռ ամերիկահայերը կարող են պակասեցնել այն թեկնածուների առկայությունը Կոնգրեսում, որոնք աջակցություն չեն ցուցաբերել հայկական խնդիրների հարցում:**

**Միեւնույն ժամանակ, Ամերիկայի Հայ իրավանց խորհուրդը (ՌԱԿ) հայտարարություն է տարածել նույն այդ նոյեմբերյան ընտրությունների առնչությամբ՝ «Նախագահ Օբամայի «Մեծ եղեռնը» սուտ չէ» վերտառությամբ: Ըստ այդմ, Օբաման միակ նախագահն է, որը Հայոց ցեղասպանության հարցը բարձրացրել է Թուրքիայում: Հայ իրավանց խորհուրդը հիշեցնում է, որ Բարաք Օբաման միակ նախագահն է, որ Հայոց ցեղասպանության հարցի մասին խոսել է Թուրքիայի խորհրդարանում՝ գեներալների եւ քաղաքական գործիչների ներկայությամբ:**

**Հայ իրավանց խորհուրդը կոչ է անում չտրվել հռետորական հայտարարություններին, այլ ավելի խորքային դիտել գործընթացները եւ աջակցել հայկական հարցերում նպաստավոր դիրքորոշում ունեցող թեկնածուներին:**

**Ակնհայտորեն ընտրական գործընթացները ոչ այնքան համերաշխ կարող են ներկայացնել ամերիկահայերին ու ամերիկահայկական կազմակերպություններին, սակայն որեւէ պարագայում հստակ է, որ հայկական շահերը կարելի է առաջ քաշել եւ պաշտպանություն ակնկալել հենց նախընտրական շրջանում, ինչն էլ, թերեւս, միակ հնարավորությունն է բարձրաձայնելու այնպիսի հարցերի մասին, ինչպիսին, ասենք, Հայոց ցեղասպանության ճանաչումն է Մ. Նահանգներում:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Սփիւռքի՞ նախարարութիւն, թէ՝ Հայաստան-Սփիւռք կապերու

**Հայաստանի Հանրապետութեան կառավարական կազմին մէջ «Սփիւռքի նախարարութիւն» կազմաւորուելէն, եւ ապա՝ «Սփիւռքի նախարարի» պաշտօնը հաստատուելէն ետք, ցարդ կը մնայ հարցումը - Ճի՞շդ են «Սփիւռքի նախարարութիւն» եւ «Սփիւռքի նախարար» տարազումները: Արդարեւ, ո՛չ, ե՛ւ օրինական հասկացողութեամբ ե՛ւ իրաւականօրէն: Քաղաքական առումով առաւել դժուարութեան առաջ է տարազումը: Ո՞վ է «նախարարը»: «Նախ» անստոյգ արմատով եթէ աւատապետական Հայաստանի մէջ «նախարարը» իշխան էր, մեծ հողատարածքի տէր, մերօրեայ բառամթերքին մէջ անոր ստուգաբանութիւնը «առաջին արարող» նշանակութիւնը կու տայ, որ «նախաձեռնողի» հոմանիշ կրնայ ըլլալ, եւ կամ՝ արուեստական բացատրութեամբ՝ «արարքին տէրը», թէեւ լռելեան հասկացողութիւնը՝ մինիսթըր է:**

**Եվ ո՞վ է «Սփիւռքը»: Այսօր Հայաշխարհը չորս, իրարմէ տարբեր ծննդոցի պատմութեամբ սփիւռքներ ունի:**

**Առաջին Սփիւռքը այն հայագաղութներն են, որոնք կազմուած են Մեծ եղեռնէն առաջ, ոմանք՝ դարեր առաջ, ինչպէս՝ Կ. Պոլսոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի, Լեհաստանի, Ռուսիոյ, Ա. Մ. Նահանգներու (հին գաղութը): Այս գաղութները կազմուած են հայերու՝ երկրէն կամաւոր արտագաղթով (բացառութիւնը 1604 թ. շահ Աբբասի կազմակերպած Ջուղայի բռնագաղթն էր դէպի Պարսկաստան):**

**Երկրորդ Սփիւռքը հայ ժողովուրդի դէմ գործադրուած Ցեղասպանութենէն հրաշքով փրկուած մնացորդացի եւ անոր ժառանգ սերունդներուն կողմէ կազմուած տարագիր հայութեան սփիւռքն է, որուն՝ «Արի տուն» ձայն կու տան Արեւմտեան Հայաստանն ու հայկական Կիլիկիան: Բռնագրաւուած Արեւմտահայաստանի եւ հայկական Կիլիկիոյ տարագիր հայութիւնը իբրեւ Սփիւռք՝ Դատի տէր եւ պահանջատէր Սփիւռք է, որ հրաւիրուած է ի՛ր բռնագրաւուած հայրենի հողերուն «Արի տուն» կանչին պատասխանելու:**

**Երրորդ Սփիւռքը այն մէկն է, որ Խորհրդային Միութեան օրերուն ծանօթ էր «Ներքին Սփիւռք» անունով, ուր գերակշիռ ներկայութիւն էր եւ ցարդ է Մոսկուայի հայագաղութը, եւ այսօր ան ծանօթ է «ռուսահայ համայնք» անունով, որ նաեւ աչքառու է իր կազմակերպութեամբ ու գործունէութեամբ:**

**Չորրորդ Սփիւռքը նորագոյն Սփիւռքն է, որ սկիզբ առաւ Խորհրդային Հայաստանի վերջին հինգ տարիներուն երկրէն արտագաղթող հայերով (ջախջախիչ մեծամասնութեամբ խորհրդային իշխանութեան օրերուն Հայաստան ներգաղթած հայեր եւ անոնց զաւակները), ապա մեծ թափ առաւ Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակման առաջին օրերէն ու ցարդ կը շարունակուի: Տուեալները կը հաստատեն, որ վերջին քսան տարիներուն շուրջ մէկ միլիոն հայ արտագաղթած է երկրէն, եւ այսօր, տարին հարիւր հազար մարդ կը հեռանայ Հայաստանէն, իսկ ժողովուրդին քառասուն տոկոսը կը մտածէ առաջին առիթով արտագաղթելու մասին:**

**Այս նորագոյն Սփիւռքն է, որ կը պահէ իր հայաստանեան անձնագիրը, այդ իսկ պատճառով Չորրորդ Սփիւռքի անդամներ արտերկրի հայաստանցիներ են, եթէ անոնք կամաւոր կերպով չեն հրաժարած այդ անձնագրէն եւ Ա. Մ. Նահանգներու, Հոլանտայի, Գերմանիոյ, Պելճիքայի, Յունաստանի եւ այլ երկիրներու քաղաքացիութիւն չեն ստացած:**

**Եւ այստեղէն պիտի սկսիլ քակել կծիկը:**

**Վերջերս մամուլին մէջ ընդհանրացած է «Հայաստանի Սփիւռքի նախարարութիւն» կամ «Հայաստանի Սփիւռքի նախարար» տարազումը, որ շարադասուած բառերու իմաստով կը նշանակէ, որ դէմ յանդիման ենք Սփիւռքի մը, որ մերօրեայ Հայաստանին կը պատկանի, եւ «Հայաստանի Սփիւռքի նախարարը» այդ Սփիւռքի նախարարն է: Տարազումը իր ճիշդ իմաստը կը ստանայ, եթէ այդ առնչուած է Չորրորդ Սփիւռքին հետ: Այսօրինակ է Լիբանանի արտաքին գործերու նախարարութիւնը, որ միաժամանակ արտերկրի լիբանանցիներու նախարարութիւն է:**

**Հոս՝ փակագիծ մը: Այսպիսի Սփիւռք մը իր օրինաւոր նախարարութեամբ՝ գալիքին մէջ կրնայ մեծ խոչընդոտներ յարուցանել «Տարագիր հայութեան Սփիւռքի» պահանջատիրութեան դէմ: Ժամանակի ընթացքին, լռութեան զօրութեամբ, «Հայաստանի Սփիւռքի նախարարութիւնը», համաքայլ ընթացքով, կամայ թէ ակամայ, կրնայ իր «իշխանութեան» ծիրէն ներս պարփակել չորս սփիւռքները, եւ յաչս աշխարհին կը պատկերանայ այնպէս, որ մերօրեայ Հայաստանի Հանրապետութեան սահմանէն դուրս բնակող բոլոր հայերը այդ Հայաստանին քաղաքացիներն էին կամ են: Ալ ասկէ ետք ի՛նչ Արեւմտահայաստանի եւ Հայկական Կիլիկիոյ պահանջատիրութիւն:**

**Անցնինք:**

**Այլապէս ալ, Հայաստանի Հանրապետութեան կառավարական կազմին մէջ «Սփիւռքի նախարարութիւնը» չի կրնար առաջին, երկրորդ եւ երրորդ սփիւռքներու նախարարութիւնը ըլլալ: Օրինականօրէն եւ իրաւական գետնի վրայ ՀՀ կառավարական կազմին մէջ «Հայաստանի Սփիւռքի նախարարութիւն եւ նախարար» չեն կրնար գոյութիւն ունենալ: Ի վերջոյ այդ ո՞վ է, որ իրաւունք շնորհեր է ՀՀ կառավարական կազմի «Հայաստանի Սփիւռքի նախարարին», որ «նախարարէ» գերիշխան երկիրներու քաղաքացիութիւնը կրող տարագիր հայութիւնն ու անոր Սփիւռքը: Նման «նախարարել» մը պարզապէս միջամտել կը նշանակէ գերիշխան երկրորդ երկրի մը ներքին կեանքին, եւ այդ իսկ պատճառով կը դատապարտուի հակաօրինականութեամբ:**

**Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները՝ երկու կողմերու համահաւասար շահերէն մեկնած, բնականոն հունի մէջ դնելու համար (եթէ իրապէս այդ է հետապնդուած նպատակը), պէտք է վերադառնալ փորձուածին: Խորհրդային Հայաստանի օրերուն աշխոյժ գործունէութիւն կը վարէր Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի (Հայաստանի) կոմիտէն: Հոս, վերակենդանանալու արժանի եւ անհրաժեշտ բառը կապն է: ՀՀ կառավարական կազմին մէջ պահանջուածը ոչ թէ «Հայաստանի Սփիւռքի նախարարութիւն» է, այլ՝ Հայաստան-Սփիւռք կապերու նախարարութիւն: Կապերու, քանի որ մշակութային գործօնէն անկախ էական ներկայութիւններ են տնտեսական, շինարարական, առողջապահական եւ այլ ասպարէզներ:**

**Հայաստան-Սփիւռք կապերու նախարարութիւն տարազումին տրամաբանական, առողջ եւ գործնական ըլլալը նաեւ անոր համար, որ կապը պարտադրաբար կը խօսի երկու կողմերու՝ Հայաստանի եւ Սփիւռքի մասին, եւ կապը կը պահանջէ երկու կողմերու համահաւասար իրաւունքը՝ յարաբերութիւնները ծրագրելու, մշակելու, գործադրելու եւ արժեւորելու:**

**Կապը նաեւ կը պահանջէ համահաւասար որակով, հեղինակութեամբ, փորձառութեամբ եւ ներկայացուցչական արժէտոմսով (եւ ո՛չ թէ միայն ի պաշտօնէ եւ ցուցադրական) իրաւ եւ իրաւական բնոյթով Գործադիր ժողովի մը կեանքի կոչումը, որ գիտէ կողմերու առարկայական կարիքներն ու պահանջները, արթուն է կողմերու իրաւունքի պաշտպանութեան, եւ զգոյշ՝ որ ծրագիրներու գործադրութիւնը չանտեսէ սփիւռքները հիւրընկալող երկիրներու շնորհած արտօնութիւններու սահմանագիծը: Ու նաեւ՝ որ Սփիւռքը միայն ունկնդիր կողմ չմնայ եւ չունենայ կարիքը յիշելու հայկական առածը. «Մի՛ ըլլար ուրագի պէս, մի՛շտ դէպի քեզ, դէպի քեզ, այլ եղիր սղոցի պէս, մէկ դէպի քեզ, մէկ դէպի մեզ»:**

**Եւ որպէսզի յարաբերութիւններու բնոյթն ու հետապնդուած նպատակները ըլլան թափանցիկ, քննադատութեան ենթակայ եւ իրաւ գնահատանքի արժանի, անհրաժեշտ է հրապարակային բեմի մը ստեղծումը: Հեռուստացուցային գովազդները կրնան աչքը շլացնել, բայց միտք չէ, որ միտքը կը համոզեն: Ահա թէ ինչու Հայաստան-Սփիւռք կապերու նախարարութիւնը պէտք է ունենայ իր պաշտօնաթերթը (ոչ թէ տարեկան տեղեկագիրերու հատորներ), ուր Հայաստան եւ Սփիւռք՝ ազատ, գիտական մակարդակի ուսումնասիրական աշխատանքներով կարենան անհրաժեշտը պարզել ու մեկնաբանել, հրապարակելով՝ բոլոր կողմերուն լսելի իրենց խօսքը ըսեն, ուր առողջ քննադատութիւնը իր արժանի ու փնտռուած տեղը ունենայ:**

**Ահա թէ ինչու ո՛չ թէ «Հայաստանի Սփիւռքի նախարարութիւն եւ նախարար», այլ՝ Հայաստան-Սփիւռք կապերու նախարարութիւն եւ նախարար:**

**Եւ երկխօսութիւնը՝ քննադատաբար, համահաւասար իրաւունքով ու գրաւոր բեմի առկայութեամբ:**

ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ
Պէյրութ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Այսօր էժան աշխատուժ է, իսկ վաղը...

Ռուսաստանն ու մասնավորապես Մոսկվան թերեւս սկսում են բախվել մի երեւույթի, որն արդեն տեւական ժամանակ խոր մտահոգության առարկա է Արեւմտյան Եվրոպայում: Խոսքը վերաբերում է մուսուլմանների ավելի ու ավելի ուժեղացող ինքնահաստատման նկրտումներին այս երկրում: Աշնանը Ուրազա-Բայրամի տոնակատարության ժամանակ տասնյակ հազարավոր մուսուլմաններ հեղեղել էին Ս. Պետերբուրգի եւ Մոսկվայի փողոցները: Իսկ իսլամի Մոսկվայի հետեւորդների մեջ հուզումներ էին բռնկել այն պատճառով, թե ինչու քաղաքային միլիցիան չի շրջափակել գլխավոր («մայր») մզկիթ տանող ավտոմայրուղիները: Դժգոհությունները կարող էին վերածվել անկարգության (ամբոխը սիրում է նման «էվոլյուցիան»), եթե իրենց հեղինակությունը գործի չդնեին մուֆթիները:

Սակայն խնդիրն այն է, որ դրանք մասնակի միջադեպեր չեն: Քաղաքի մուսուլմանները ավելի ակտիվորեն են անբավականություն հայտնում, որ Մոսկվայում շատ քիչ են մզկիթները, եւ հավատացյալները հնարավորություն չունեն գոհացնելու իրենց հոգեւոր պահանջմունքները (հո «փողոցում» չե՞ս նամազ անելու): Եվ եթե սկզբում նրանք պահանջում էին մզկիթ կառուցել քաղաքի օկրուգներում, ապա ներկայումս դրվում է բոլոր շրջաններում դրանք ունենալու հարցը: Խոսքը վերաբերում է առնվազն 150 մզկիթի ներկայիս 5-ի դիմաց: Ինքնին հասկանալի է, որ մզկիթներին կից կբացվեն ուսումնական հաստատություններ, մշակույթի կենտրոններ, մանկատներ եւ այլն: Ռուսներն այս ամենի մեջ տեսնում են մայրաքաղաքի մահմեդականացման ծրագիր: Մինչդեռ նրանց մեջ հենց միայն նամազի ծորուն «կանչը» բացասական զգացումներ է առաջացնում:

Ուշագրավ է, որ Մոսկվայում կրոնական պայթյունալի իրավիճակի ստեղծմանը կարող է նպաստել ոչ միայն բուն ռուսների եւ մյուս քրիստոնյա հավատացյալների դժգոհությունը, այլեւ խոր ներհակումները հենց մուսուլմանների շրջանում. տարբեր պահանջներ են ներկայացնում զանազան կրոնական ուղղությունները, հոսանքները, ազգային հավակնությունները եւ այլն:

Ի տարբերություն Եվրոպայի, որտեղ մուսուլմանները եկվոր են, ռուսները գործ ունեն տեղաբնակների հետ, որոնց մեջ «առաջատար» դերը պատկանում է թաթարներին ու չեչեններին (երկրի գլխավոր մուֆթիները հիմնականում թաթարներ են, իսկ Ռամզան Կադիրովը Գրոզնիում կառուցեց Եվրոպայի խոշորագույն մզկիթը): Սակայն Ռուսաստանի (Մոսկվայի) մահմեդականացման հիրավի իրական գործընթացի մեջ (առաջին հերթին նկատի է առնվում ռուսների ժողովրդագրական աղետալի վիճակը) աչք է զարնում մի երեւույթ, որի նկատմամբ կարճատեսությունը պարզապես ապշեցնում է: Խորհրդային Միության քայքայումից հետո մորեխի պես Ռուսաստան լցվեցին ազերները, որոնք սկսելով իրենց սիրելի բազարից, այսօր բնավորվելով, արդեն զգալի տնտեսական ու ֆինանսական ուժ են ներկայացնում: Իսկ հատկապես վերջին տասնամյակում Ռուսաստանի քաղաքներն ու գյուղերը բառացիորեն հեղեղել են միջինասիացիները, առավելապես տաջիկները, կիրգիզներն ու ուզբեկները:

Ներգաղթողների այս բանակը հասնում է միլիոնների: Ընդ որում, ներկայացնում են իրենց ազգերի ցածրագույն խավը ինտելեկտուալ թե մշակութային առումով: Բայց ահա մուսուլմանական այս խառնամբոխը ակտիվորեն ու համերաշխորեն է մասնակցում կրոնական կյանքին եւ տվյալ դեպքում տեղացի մուսուլմանների հետ հավասար իր «ձայնն» է բարձրացնում հօգուտ մզկիթների ցանցի ընդլայնման: Ակնհայտ է նաեւ ոչ ռուսաստանցի մուսուլմանների շոշափելի նյութական եւ ֆինանսական աջակցությունը հանուն «համամուսուլմանական» (հակաքրիստոնեական) գործի առաջընթացի, եթե չասենք՝ հաղթանակի...

Մոսկվացիների կողմից իրենց նոր քաղաքապետ Սերգեյ Սոբյանինին ներկայացվող առաջնահերթ պահանջներից մեկն էլ հենց վերաբերում է ներգաղթողների հախուռն ամբոխի անցանկալի ներկայությանը մայրաքաղաքում: Սակայն դժվար կլինի սպասել որեւէ դրական արդյունքի, եթե ռուսներն էլ մուսուլմանական նվաճողականության դեմ պայքարեն նույնքան թուլամորթ կերպով, որքան «մարդու իրավունքների» եւ «հավատի ազատության» ջատագով եվրոպացիները:

Մտածում ես՝ ռուսնե՛ր, ձեր ինչի՞ն է պետք այդ ազերա-միջինասիական անորակ զանգվածը: Հասկացանք, այսօր էժան աշխատուժ է, իսկ վաղը...

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# «Դեպի Եվրոպա ձգտող Ռուսաստանն այլընտրանք չունի»

1990-ականների սկզբներին Ռուսաստանը փորձում էր Արեւմուտքին ահաբեկել Արեւելքի հետ մերձենալու սպառնալիքներով: Ներկայումս Մոսկվան, ընդհակառակը, մերձենում է Եվրոպայի հետ, քանի որ «այլընտրանք չունի»: Այս տեսակետն է արտահայտում ֆրանսիական ֆինանսատնտեսական ուղղվածություն ունեցող Les Echos թերթը: Միջազգային հարաբերությունների ֆրանսիական ինստիտուտի խորհրդական **Դոմինիկ Մոիզին** թերթում գրում է, որ «սառը պատերազմն» անցյալ է դարձել, իսկ Մոսկվա-Վաշինգտոն մերձեցումը նախորդել է Փարիզի եւ Բեռլինի հետ Մոսկվայի մերձեցմանը:

«Ռուսաստանը ձգտում է դեպի Արեւմուտք, քանի որ իրեն ավելի ուժեղ է զգում Վաշինգտոնի, Փարիզի, Բեռլինի հետ երկխոսության մեջ, ինչպես նաեւ գիտակցում է, որ անշրջելիորեն հետ է մնացել Չինաստանից: Ռուսաստանին պետք են Արեւմուտքի, հատկապես Եվրոպայի ներդրումները: Իսկ նրանց համար Ռուսաստանը գրավիչ գործընկեր է. Պուտինի վարչակարգն ավելի քան երբեւէ ուժեղ է», գրում է Մոիզին:

Հոդվածագիրը վստահ է, որ 2012-ին Պուտինը վերադառնալու է ՌԴ նախագահի պաշտոնին: Նա շատ մեծ ժողովրդականություն է վայելում եւ պետք է որ հաղթի: Կարեւոր պաշտոնները (Թաթարստանի նախագահից մինչեւ Մոսկվայի քաղաքապետ) զբաղեցնում են յուրայինները: Ռուսաստանը գիտակցում է ԱՄՆ-ի դժվարությունները եւ Եվրամիության թուլությունները: Բոլոր ցուցանիշներով իրեն գերազանցող Չինաստանին հակակշռելու համար Ռուսաստանը կողմնորոշվում է դեպի Եվրոպա: Վերջինս հանդես է գալիս բազմաբեւեռայնության եւ երեք կենտրոնների (ԵՄ, Ռուսաստան, Թուրքիա) օգտին: «Նոր իրավիճակը վերջ է դնում ՆԱՏՕ-ի ու Եվրամիության գերիշխանությանը, եւ Մոսկվայի ձեռքին հայտնվում են նոր խաղաքարտեր», եզրակացնում է հեղինակը:

# Թուրքիան գազ կփնտրի Կիպրոսի հյուսիսում

Թուրքիայի կառավարությունը մտադիր է շուտով երկրաբանական հետախուզական աշխատանքներ սկսել 1974-ին իր օկուպացրած Հյուսիսային Կիպրոսի տարածքային ջրերում: Էներգետիկայի նախարար Թաներ Յըլդըզը հայտարարել է, որ ժամանակն է սկսելու նավթի ու գազի որոնումը «Թուրքիային պատկանող տարածքում»: Նա խոստացել է էներգակիրներով օգնել Կիպրոսի հունական մասին, եթե «համապատասխան խնդրանք ստացվի»: Այդ մասին հաղորդում է Newsru.Israel կայքը:

Նախարարի հայտարարությունը լարվածություն է առաջացրել հույն եւ թուրք կիպրացիների հարաբերություններում, որոնք շարունակում են բանակցել կղզու վերամիավորման նպատակով: Հանրապետության ներկայացուցիչները Թուրքիային մեղադրել են ելուզակության մեջ:

Տարածաշրջանում էներգակիրների որոնումներն ակտիվացել են Իսրայելի տնտեսական գոտում բնական գազի «Թամար» խոշոր հանքավայրի հայտնագործումից հետո: Վերջերս Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը Լիբանանին խոստացավ օգնել միջերկրածովյան ծանծաղուտում նավթի ու գազի որոնման գործում, իսկ Թուրքիան համանման խոստում տվեց Սիրիային:

# Կոշիկ են նետել Ավստրալիայի նախկին վարչապետի վրա

Ավստրալիայում հեռուստաշոուի տեսագրման ժամանակ ստուդիայում ներկա գտնվող հանդիսականներից մեկը կոշիկներ է նետել ծրագրի հյուրի՝ երկրի նախկին վարչապետ Ջոն Հովարդի վրա:

BBC հեռուստաընկերության կայքը հաղորդում է, որ երբ Հովարդը պատասխանում էր Իրաքի պատերազմի հետ կապված հարցերին, երիտասարդ հանդիսականներից մեկը իր կոշիկները հերթով նետել է նրա կողմը:

«Սա՝ Իրաքում զոհվածների համար», բացականչել է երիտասարդ կոշկանետորդը, որին դուրս են բերել հեռուստաստուդիայից:

Ավելի ուշ ներկաներից մեկը Հովարդի ելույթի ժամանակ բղավել է. «Ձեր ձեռքերն արյունոտ են»:

Ջոն Հովարդը Ավստրալիայի վարչապետի պաշտոնն զբաղեցրել է 1996-ի մարտից մինչեւ 2007-ի դեկտեմբեր (Իրաքի պատերազմը սկսվեց 2003-ին):

ԻՐԱՆ

# Բուշեհրի ԱԷԿ-ում սկսվել է վառելիքի լիցքավորումը

Իրանը սկսել է ուրանային կաղապարների բեռնավորումը Բուշեհրի ԱԷԿ-ում: Այդ մասին հաղորդում է IRNA գործակալությունը:

«Չնայած ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի մյուս երկրների հակազդեցությանը եւ հակաիրանական խիստ պատժամիջոցներին, մեր ծրագրերը կիրականացվեն նախատեսված ժամկետներում», հայտարարել է Իրանի խորհրդարանի անվտանգության եւ արտաքին գործերի հանձնաժողովի ղեկավար Ալաեդդին Բորուջերդին:

Բուշեհրի ատոմակայանի պաշտոնական բացումը տեղի ունեցավ



2010-ի օգոստոսին («**Ազգը**» գրեց այդ մասին): Այն ժամանակ ռեակտորը փորձնական կարգով լիցքավորվեց 163 ուրանային կաղապարաձողով: Գործողությունն իրականացվում էր ՄԱԳԱՏԷ-ի տեսուչների վերահսկողության ներքո:

ԱԷԿ-ի բացումը սկզբում նախատեսված էր 2007-ին, սակայն տեխնիկական խնդիրները եւ նախագծի ֆինանսավորման հարցում Ռուսաստանի հետ ծագած վեճերը ձգձգեցին շինարարությունը, որը շարունակվեց մոտ 30 տարի:

Ռեակտորի նախագծային հզորությունը հազար մեգավատ է: Տնտեսության կարիքների համար էլեկտրաէներգիայի արտադրությունը սկսվելու է 2011-ի գարնանից ոչ շուտ:

Սեպտեմբերին Իրանի իշխանությունները խոստովանեցին, որ ԱԷԿ-ի համակարգիչները ենթարկվել են Stuxnet վիրուսի գրոհին: Միաժամանակ հայտարարվեց, որ ռեակտորի աշխատանքն ապահովող համակարգերը չեն տուժել: Չնայած դրան, ուրանային վառելիքի բեռնավորումը հետաձգվեց մինչեւ հոկտեմբերի վերջերը:

# Գուամ կղզում կառուցվում է ամերիկյան գերռազմակայան

Ամերիկացիները խաղաղօվկիանոսյան Գուամ կղզում կառուցում են գերռազմակայան: Կառուցումը կարժենա 8 մլրդ ֆունտ կամ 12,5 մլրդ դոլար: Ռազմակայանը կոչված է զսպելու Չինաստանի ռազմական զորության աճը, պարզաբանում է բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթը:

Նախատեսվում է ստեղծել ատոմային ավիակրի կառամատույց, հակահրթիռային պաշտպանության համակարգեր, վարժական զի-



նափորձարաններ, ընդլայնել կղզում արդեն գտնվող ռազմակայանը: Երկրորդ աշխարհամարտից ի վեր դա կլինի Խաղաղ օվկիանոսի արեւմուտքում ռազմակայանում կատարվող խոշորագույն ներդրումը եւ վերջին տասնամյակներում ռազմածովային ենթակառույցի զարգացման ամենամեծ նախագիծը:

Մինչդեռ Գուամի բնակիչները վախենում են, որ շինարարությունը կվնասի կղզու էկոհամակարգին եւ զբոսաշրջության վրա հիմնված տնտեսությանը: Հաշվարկները ցույց են տալիս, որ շինարարության ընթացքում կղզու 173 հազարանոց բնակչությունը 50 տոկոսով կավելանա: Շինարարության ավարտից հետո ճապոնական Օկինավա կղզուց այստեղ կբերվեն ծովային հետեւակի 19 հազար զինծառայողներ:

ԱՄՆ շրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունը զգուշացնում է, որ շինարարությունը կղզում կարող է առաջացնել ջրի զգալի անբավարարություն: Բացի դրանից, ծովի հատակի խորացման աշխատանքները կարող են վնասել 300 քառ. մետր կորալային խութերի:

Փորձագետների կարծիքով, Չինաստանը ներկայումս Խաղաղ եւ Հնդկական օվկիանոսներում կարող է մարտահրավեր նետել ԱՄՆ գերազանցությանը: Վերջին տասնամյակում չինացիները զգալիորեն ընդլայնել են իրենց նավատորմը, որպեսզի ամերիկացիները չմիջամտեն Տայվանի հետ ՉԺՀ-ի հնարավոր ռազմական հակամարտության դեպքում: Չինական ծովուժի հզորացման մյուս նպատակը Մերձավոր Արեւելքից եկող ծովային ուղիների անվտանգության ապահովումն է. 2035 թվականին Չինաստանն այնտեղից կներմուծի երկրում սպառվող նավթի 70-80 տոկոսը:

# Մեր լինելիության երաշխավորները

Նոր գրախանութը, որ 2 օր առաջ բացվեց Երեւանում, կարեւոր իրադարձություն համարեցինք: Իհարկե, նկատի առնվում է նաեւ գործելաոճի եւ սկզբունքի հանգամանքը, թե ինչ գրականություն է քարոզվում եւ ինչպես է այն մատուցվում՝ բնավ ոչ անկարեւոր: Վաղուց արդեն տարբեր ամբիոններից, մտավորական շրջանակներից, գրական հանդեսների խմբագրականներից անգամ փաստվում է ընթերցողական լսարանի ակնհայտ նվազումը, գրաշուկան հաստատում է հիմնականում մասնագիտական (նաեւ դասագրքերի), թերեւս նաեւ մանկական գրականության համեմատաբար բարձր պահանջարկը: Հասարակական մի նեղ շրջանակ միայն՝ հետամուտ իր ներքին մտավոր կյանքի զարգացմանը, գրախանութներում որոնում է մշակութաբանական, արվեստաբանական կամ փիլիսոփայական-հոգեւոր բնույթի գրականություն: Ցավալիորեն նման գրականության իսկական հասցեատերը հաճախ չէ, որ կարող է բավարարել մտավոր իմ պահանջմունքը: Ինչպես իմ զրուցակից երիտասարդ աղջիկը նկատեց, դրանք մեր տիպի (անապահով) հասարակությունների համար շռայլություն են: Իր նախասիրությունները, օրինակ, երաժշտական ալբոմների եւ կամ գրքերի, նա որոնում է ինտերնետային կայքէջերում եւ ձեռք բերում, այսպես ասած, պիրատական եղանակով: Ափսոսում էր շատ, որ քաղաքի գրախանութներից մեկը, որտեղ համակարգչային տարբեր ծրագրերի վերաբերյալ գրականություն էր գտնում, այլեւս չի գործում: Բայց ահա բացվում է «Բյուրոկրատը», եւ տնօրենը՝ **Սամվել Հովհաննիսյանը,** չնայած երիտասարդ տարիքին, շատ պրոֆեսիոնալ եւ պատասխանատու մոտեցում է ցուցաբերել: Շատերին տարօրինակ թվացող գրախանութի անունը արդարացում ունի՝ որպես արդեն կայացած ընկերության, որը եվրոպական արտադրության բարձր որակի հագուստ էր ներկրում Հայաստան (այժմ դադարեցրած) եւ համակիր ու վստահող հաճախորդների ցանց էր ձեւավորել: Չնայած հասկապես նման հագուստի եւ արվեստի, գիր ու գրականության գնորդը թե՛ հոգեկերտվածքով, թե՛ մտածողությամբ տարբեր է, այդուհանդերձ, ընկերությունը հարմար է գտել անվանափոխություն չկատարել:

Եվ այսպես՝ «Բյուրոկրատ»: Ի՞նչ է առաջարկում գրախանութը եւ ինչպե՞ս: Ներկայացված գրականությունը մասնակից-հիմնադիրների բարձր ճաշակի եւ ինտելեկտուալ մակարդակի վկայությունն են, անշուշտ: Գրախանութի ոչ այնքան մեծ տարածքը կազմում են 3 հատվածներ՝ մուտքից սկսվող եւ տրամադրություն ապահովող՝ հանդիպումների, շնորհանդեսային միջոցառումների եւ բուն գրավաճառային երկու սրահներով, որոնցից առաջինում ներկայացված գրականությունը հայերենով լույս տեսած փիլիսոփայական, մշակութաբանական գրքեր են՝ գերակշռող մասը «Սարգիս Խաչենց. Փրինթինֆո» հրատարակչությունների տպագրությամբ: Նույն սրահի ձախակողմյան անկյունը մանկական գրականությանն է տրամադրված. գրքերը ներմուծված են ԱՄՆ-ից եւ Ռուսաստանից, ինչպես նաեւ կան տեղական հրատարակություններ:

Ամենապատվորիչը հաջորդ սրահն է՝ արվեստի, նկարչության, քանդակագործության, ճարտարապետության, երաժշտության, կինոյի եւ այլ ոլորտներին վերաբերող՝ հիմնականում օտար լեզուներով եւ ռուսերենով (մի քանիսը հայերենով) ընտիր հրատարակություններ՝ Վերածննդի շրջանի հանճարներից՝ Միքելանջելոյի, Դա Վինչիի մեծադիր, շքեղակազմ կատալոգներից, մինչեւ 19-20-րդ դարերի նշանավոր արվեստագետների ալբոմներ, ճոխ պատկերագրքեր: Արվեստի սիրահարներին այս սրահը հաստատ գայթակղելու, հմայելու եւ այնտեղ երկար պահելու շատ առիթներ ունի: Հիշյալ գրականությունը Հայաստան ներմուծվում է «Բյուրոկրատ» ընկերության եւ ռուսական «Արտ Ռոդնիկ», ինչպես եւ գերմանական «Թաշեն», նաեւ եվրոպական մի քանի այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում: Համագործակցության նոր առաջարկ եղավ դահլիճում ներկա լիոնահայ Մանուկ Փամբուկչյանից:

Ամենահատկանշականը, ինչը երեւանյան որեւէ գրախանութում չես տեսնի, հատուկ վերաբերմունքն է յուրաքանչյուր գրքին, առանձին, պատշաճորեն ներկայացնելը՝ գնորդից որեւէ ջանք չպահանջող: Գրախանութը նաեւ ձեւավորողն է լինելու նոր հարաբերությունների, հետաքրքրական ավանդույթների, որոնցից մի քանիսն արդեն գործում են՝ ինչպես, օրինակ, ցանկությունների պատի գաղափարը. որեւէ գնորդ այստեղ կարող է գրավոր թողնել իր պահանջը (առաջինը դա արեց Արթուր Բախտամյանը): Կա նաեւ հատուկ զամբյուղ, ուր կարող ես թողնել որեւէ գիրք եւ վերցնել ուզածդ (թերեւս՝ համարժեքորեն): Կարծում եմ՝ «Բյուրոկրատը» միայն գրախանութային նշանակությամբ չի, որ գործելու է, բովանդակությունն ու կառուցվածքն արդեն իսկ նշան են մտավորական հետաքրքրական վայրի վերածվելու, անշուշտ՝ սահմանափակ շրջանակի, բարձր ինտելեկտուալ միջավայրի համար:

Երեւանում գրախանութ բացելն անպատեհությո՞ւն է: Այս մտայնությունը այնքան է խորացել, որ հարցադրումը տնօրենին հիմնականում հիշյալ բնույթի է: Մի բան, որ մեր ընդհանուր միջավայրի լավագույն բնութագրումը կարելի է համարել: Սամվել Հովհաննիսյանը տաղանդավոր եւ ունակ շատ երիտասարդների պես վերջին տարիներին ինքն էլ փորձել է դուրս գալ Հայաստանից, եղել է Եվրոպայում, ԱՄՆ-ում, բայց վերադարձել է: Ընկերոջ՝ Մկրտիչ Մաթեւոսյանի հետ հանդիպումը փոխել է կյանքի ընթացքը: Նա է իրեն այս քայլին առաջին մղողը եղել: Գրախանութի ձեւավորման ճանապարհին Սամվելին զարմացրել է հատկապես այդքան բարեհոգի մարդկանց հանդիպելը, որոնք հոժարակամ, առանց վարձատրության աջակցել են՝ ճարտարապետ, դիզայներ կամ որեւէ մեկը: Մտավորական այն շղթան, որ գոյացել ու գործում է, պատահականություն չէ. Մկրտիչ Մաթեւոսյան («Հայգրքի» կենտրոնի տնօրեն), Մելիք Կարապետյան («Արտֆիլմ» ընկերության տնօրեն), Դավիթ Մարգարյան (գեղարվեստական ձեւավորող), Արամ Մեհրաբյան («Փրինթինֆո» տպագրատան տնօրեն) եւ Սերգեյ Խաչիկօղլյան («Սարգիս Խաչենց» հրատ. տնօրեն), վերջինս՝ ստեղծագործական, հեղինակային իր կազմով: Նրանք այն մարդկանցից են, ովքեր «չհամակերպվեցին պարտվողական տրամադրություններին, չտրվեցին հոգեւոր ծուլությանը», «անհորիզոն բաց ծովում լագը կորցրած նավը թիավարողներից դարձան»:

*«Եթե, այնուամենայնիվ, մենք ցեղ ենք, ժողովուրդ ենք, երկիր ենք, շնորհիվ՝ հատուկենտ մարդկանց, որոնք երբեք չեն կարող ընդունել այս իրողությունը. ավելի շուտ կմեռնեն, քան՝ կհամակերպվեն: Նրանք հազար ու մի օբյեկտիվ պատճառներին կարող են հակադրել իրենց սուբյեկտիվ պատճառները, թե ինչու պետք է կյանքը շարունակվի եւ ինչու իրենք պետք է ստեղծագործեն՝ ինչ պայմաններ էլ որ լինեն: Սամվելը հո լա՞վ գիտի, որ գրախանութը Երեւանում չի կարող շահութաբեր լինել»*.

**Սերգեյ Խաչիկօղլյանը** այն քիչ (գուցե միակ) հրատարակիչներից է, ով իր մտավորական բարեկամներին, ընկերներին իր տպագրած գրքերի նվիրատվությունը համարում է գործի անհրաժեշտ շարունակություն. «Ես պիտի խնդրեմ, ասաց նա, մտավորական մարդկանց, գրագետ մարդկանց օգնել Սամվելին՝ կայացնելու գրախանութը, այսինքն՝ երբեմն-երբեմն այս գրախանութից գրքեր գնել»: Եվ առաջին գնորդը ինքը եղավ: Կոստան Զարյանի հատորը նա նվիրեց հեղինակի սերն ու բարեկամությունը ժամանակին վայելած մեր հռչակավոր կոմպոզիտորին՝ Տիգրան Մանսուրյանին:

*«Մեր ջրաղացի քարը այս երկու տասնամյակների ընթացքում կարծես թե հակառակ ուղղությամբ է պտտվում: Կարծում եմ՝ այն սեղը, որ ահա խրում ենք այդ ջրաղացի քարի արանքում, մի պահ կանգնեցնելու է հոսքը, որպեսզի հետո ջուրը ինքներս ուղղորդենք ճիշտ հունով»*՝ գրախանութի մուտքը երեւանյան մշակութային կյանք այսպես ողջունեց **Արամ Մեհրաբյանը**, որի ղեկավարած «Փրինթինֆո» տպագրատան հետ համատեղ «Սարգիս Խաչենցը» լույս է ընծայել Կ. Զարյանի «Անցորդն ու իր ճամբան» (Համայնավէտ)-ը: Գիրքը հրատարակության է պատրաստել, ծանոթագրել եւ առաջաբանը հեղինակել գրականագետ **Երվանդ Տեր-Խաչատրյանը:** Նա բավական ընդարձակ ներկայացրեց վեպի գաղափարական բովանդակությունը, գրական-լեզվական առանձնահատկությունները, սյուժեն: Կոստան Զարյանի այս գործը համարվում է նոր ժամանակների հայոց առաջին վեպը: Այն գրվել է 1926-27 թվականներին, հրատարակվել «Հայրենիք» ամսագրում, 1926-ի հոկտեմբերից մինչեւ 1928-ի հունվարը: Առանձին գրքով՝ 1975-ին, Բեյրութում: Երեւանյան այս նոր շքեղ հրատարակությունը՝ գրքի տպավորիչ-ճերմակ կազմով, պահանջել է բանասիրական, խմբագրական լուրջ աշխատանք՝ ի մասնավորի նախորդ հրատարակություններում թույլ տրված բազմաթիվ անճշտությունները հստակեցնելու, սրբագրելու:



«Արիստոկրատ ոգու գրականություն». այսպես բնորոշեց Կ. Զարյանի գործը գրքի խմբագիրը՝ վերհիշեցնելով Հակոբ Սիրունու «Դարու վեպը» բնութագրումը եւս: Բանախոսը կարեւորեց գրողի վերաբերմունքը հայ ժողովրդի պատմության եւ նրա գոյության առեղծվածի հանդեպ, հեղինակի մտքի շարժումը՝ հայ մարդու ենթագիտակցության մեջ ազգային ինքնաճանաչողության կարեւոր ուղի բացող: Լեզվական առումով նաեւ, Կոստան Զարյանը, շնորհիվ հայերենի փայլուն իմացության, այն գրողներից է, ով առաջիններից մեկը իրագործեց մեր լեզվի երկու հատվածների բառապաշարային եւ լեզվամտածողական շերտերի մեկտեղումը: Վեպի կարեւորագույն խնդիրներից մեկը նա համարեց հայ տարագրության հարցը. *«Ոչ մի հայ գրող այնքան խորությամբ չի ապրել այդ ողբերգությունը, որքան Կոստան Զարյանը, երեխայի պես մորմոքել է, որ զրկված է Հայաստանում ապրելու երանությունից: Ֆլորենցիայում իրեն ցմահ բնակության են տվել Բյոկլինի վիլլան, ինքը թողել-եկել է Հայաստան: Ծնված չլինելով Հայաստանում՝ իրեն համարել է արարատյան մարդ:*

*1919-ին, երբ մեր ժողովուրդը շփոթահար ցրված էր աշխարհով մեկ, ինքն առաջինն էր մեր գրողներից, ով ճիշտ ուղղությունն էր մատնացույց անում՝ դեպի Արարատ: Իր համար Արարատյան դաշտավայրն այն տեղն էր, ուր հանդիպում են Արեւելքն ու Արեւմուտքը: Իր վեպը նա ավարտում է այսպես. «Երախտապարտ եմ, օ՜, իմ երկիր, քո հասցրած ցավի եւ վերքերի համար»:*

... Այսպիսի գրախանութ, այսպիսի գրքեր, թեեւ քիչ, բայց շարունակվող ստեղծագործական ազնիվ մտահղացումներ, մի խոսքով մտավորական կյանք, որ չնայած Երվանդ Տեր-Խաչատրյանի բնորոշումով մշակութային համատարած դավաճանության, անճաշակության, գռեհկության ու անգրագետության այս օրերին, այնուամենայնիվ, ծավալվում են: Եվ եթե դարձյալ իր խոսքերով, «անապատի սարսափը ավազը չէ, ոչ էլ օչինդրը՝ արձագանքի պակասն է», այդուհանդերձ, կան արձագանքողներ, կան հովանավորողներ, աջակիցներ, որոնց էլ՝ պատիվ ու հարգանք:

Կ. Զարյանի այս վեպի տպագրությունը հովանավորել է Տիգրան Թորոսյանը՝ իր համար բարդ իրավիճակում, ծանր հոգեվիճակում, պաշտոնավարության վերջին օրերին: Նրան էլ առանձին շնորհակալական խոսքեր հղեցին խմբագիրն ու հրատարակիչը:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

**Հ. Գ.** Սերգեյ Խաչիկօղլյանը տեղեկացրեց նաեւ, որ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հետ Կոստան Զարյանի երկերի ժողովածուի 15 հատորների հրատարակության պայմանավորվածություն ունեն, եւ գրողի ժառանգները համաձայնել են հեղինակի արխիվը տրամադրել Երվանդ Տեր-Խաչատրյանին, որով եւ առավելագույնս կապահովվի հատորների գիտական բնույթը:

Կ. Զարյանի այս վեպի, նախորդած հրատարակությունների («Դեպի Արարատ», «Նավատոմար», «Միացյալ Նահանգներ», «Բառերի ոսկին», («Սարգիս Խաչենց-Փրինթինֆո» հրատ.), «Սպանիա» («Նաիրի» հրատ.) եւ, իհարկե, վերոհիշյալ ծրագրի իրագործումով կիրականանա նաեւ գրողի այն երազանքը, թե «կսպասեմ այն օրվան, երբ Հայաստանում երբեւիցե իմ գրքերը տպագրվեն»: «Տարագիր անցորդը, որը օտարության մեջ էր, այս վեպով վերադարձավ Հայաստան: Կոստան Զարյանը այլեւս Հայաստանում է», եզրափակեց Երվանդ Տեր-Խաչատրյանը:

---

ЮЬарР²Ь,°к

## «Ինձ համարում եմ մի փոքրիկ մոմ, որ վառվել ու լուսավորել եմ իմ շրջապատի խավար հոգիները»

**Երեւանի Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը երեկ սովորականից մարդաշատ էր: Մարդկանց այստեղ էր հավաքել մեր օրերում հազվադեպ տեղի ունեցող մի միջոցառում՝ Արտեն արքեպիսկոպոս Բերբերյանի վերջերս լույս տեսած հայ հոգեւոր երգերի ու շարականների հատընտիր ժողովածուների շնորհանդեսն էր: Հենրիկ Բախչինյանի՝ Գրականության եւ արվեստի թանգարանի տնօրենի խոսքով՝ շատ ուսումնասիրողներ կան, որոնք աշխատում են բուն արխիվներն առանց ուսումնասիրելու: Սակայն Արտեն սրբազանն այն քչերից է, որոնք բուն աղբյուրներից են օգտվում: «Հայ հոգեւոր երգերի ընտրանի» եւ «Հայ հոգեւոր երգերի ընտրանի. շարականներ» ժողովածուների մեջ զետեղված են բազմահարուստ հայ հոգեւոր երաժշտության լավագույն նմուշներն՝ արդեն եվրոպական նոտագրությամբ:**

**Ժողովածուների նպատակն է նպաստել հայ երաժշտական արվեստի զարգացմանը: Այս գրքերը կարող են նաեւ որպես ուսուցողական ձեռնարկներ ծառայել «Հայ հոգեւոր երաժշտություն» դասընթացի շրջանակներում ինչպես հոգեւոր, այնպես էլ աշխարհիկ ուսումնական հաստատությունների սաների համար: Միջոցառման ընթացքում «Կրթություն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Գագիկ Մինասյանն անդրադարձավ Արտեն սրբազանի կենսագրության ուշագրավ տվյալներին: Ներկաները նաեւ շնորհավորեցին սրբազան հորը նրա ծննդյան տարեդարձի առթիվ: Արտեն արքեպիսկոպոս Բերբերյանը ծնվել է 1937 թվականի հոկտեմբերի 26-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Ընտանիքի հետ ներգաղթել է Հայաստան 1947-ին: 1955-1960թվականներին սովորել է Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանում: Կրթություն է ստացել Լոնդոնում եւ Ժնեւում: Եղել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գուգարաց թեմի առաջնորդ: Վերջին 10 տարիներին Արտեն սրբազանը շուրջ 8 գիրք է հրատարակել եւ թողարկել է 6 ձայնասկավառակ: Նա հեղինակն է «Հովվական աստվածաբանություն», «Պատկերազարդ սրբազան պատմություն» եւ այլ գրքերի: Շնորհանդեսում ներկայացված «Հայ հոգեւոր երգերի եւ շարականներ» երկհատորյակի խմբագիրը Գագիկ Մինասյանն է, մասնագիտական խմբագիրը՝ Անահիտ Բաղդասարյանը:**

**Ցերեկույթին ներկա էր նաեւ Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը, որ Վեհափառ հայրապետի օրհնությունն ու խոսքը փոխանցելուց հետո նշեց. «Ըստ իս՝ Արտեն արքեպիսկոպոս Բերբերյանը մեր եկեղեցական երաժշտության լավագույն կատարողն է»: Փառեն սրբազանի խոսքի վկայությունը Գոհար Գասպարյանի եւ Արտեն սրբազանի համատեղ ձայնագրություններն են: «Գնացեք մեր եկեղեցիները եւ լսեք մեր երգեցողությունը, պարզապես տխուր է», ասաց Փառեն սրբազանը, թեեւ, նրա խոսքով, ամեն տեղ չէ նույն վիճակը, օրինակ՝ բացառություն է կազմում Մայր աթոռը: «Երգեցողությունը ծիծաղելի է, մեր հայրերը դա չէ, որ գրել են: Կարծում եմ՝ Արտեն սրբազանի այս գործերը պետք է անմիջապես մուտք գործեն մեր հոգեւոր ճեմարանները, նաեւ տրամադրվեն երգչախմբերի անդամներին, որպեսզի Հայ առաքելական եկեղեցու մեջ լինի միօրինակություն», ավելացրեց Փառեն սրբազանը:**

**Արտեն արքեպիսկոպոս Բերբերյանին շնորհավորեցին եւ առանձին խոսքով հանդես եկան Կոմիտաս վարդապետ Հովնանյանը, «Հայաստանի երաժշտական ընկերության» նախագահ, Կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը, Սարգիս քահանա Սարգսյանը, Գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանը եւ ուրիշներ: Վերջում Արտեն սրբազանը շատ համեստ խոսք ասաց. «Ինձ համարում եմ մի փոքրիկ մոմ, որ վառվել ու լուսավորել եմ իմ շրջապատի խավար հոգիները»:**

**Միջոցառումն ավարտվեց Արտեն սրբազանի մշակած «Հայր մերով», Գեւորգյան ճեմարանի ուսանողների կատարմամբ:**

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# «Հատիսը» սկսում է մրցավեճը




Նովոսիբիրսկի «Դինամո-ԳՈՒՎԴ-ի» հետ այսօր կայանալիք խաղով Երեւանի «Հատիսը» կմեկնարկի Եվրոպայի գավաթի խաղարկությունում: Նովոսիբիրսկի «Սեւեր» մարզադահլիճում նախատեսված այդ հանդիպումը կսկսվի Երեւանի ժամանակով 15.30-ին:

Հիշեցնենք, որ «Հատիսն» ընդգրկված է Եվրոպայի գավաթի խաղարկության ընտրական F խմբում, որտեղ բացի Նովոսիբիրսկի թիմից, մրցելու է նաեւ Իսրայելի Ռամլա քաղաքի «Էլիտզուրի» հետ: Այդ թիմի հետ հանդիպումը կկայանա նոյեմբերի 4-ին Երեւանի «Միկա» մարզադահլիճում, որտեղ հաջորդ խաղում՝ նոյեմբերի 18-ին կհյուրընկալվի նաեւ «Դինամո-ԳՈՒՎԴ-ը»: Մրցաշարի վերջին խաղը «Հատիսը» կանցկացնի նոյեմբերի 25-ին «Էլիտզուրի» հետ Ռամլայում: Նշենք, որ հաջորդ փուլի ուղեգիր են նվաճելու խմբում 2 լավագույն թիմերը, այնպես որ «Հատիսը» հիանալի հնարավորություն ունի շարունակելու պայքարը:

«Հատիսը» մրցավայր մեկնեց հոկտեմբերի 25-ի երեկոյան Երեւան-Նովոսիբիրսկ չվերթով: Թիմը հանգրվանել է Նովոսիբիրսկի ամենաբարձրահարկ հյուրանոցում՝ «Նովոսիբիրսկում»: Ինչպես տեղեկացնում է Armsport.am-ի թղթակիցը, ներկայումս Նովոսիբիրսկում ջերմաստիճանը +6 է: Երեկ «Հատիսը» վերջին մարզումն անցկացրեց: Իսկ մինչեւ մրցավայր մեկնելը «Հատիսը» ընկերական մրցախաղում ուժերն էր չափել Հայաստանի տղամարդկանց մինչեւ 21 տարեկանների հավաքականի հետ ու հաղթել էր 79-73 հաշվով: Խաղի նախօրեին Նովոսիբիրսկում նախատեսվում էր «Հատիսի» հանդիպումը տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

«Հատիսի» կազմում Նովոսիբիրսկ են մեկնել 11 բասկետբոլիստուհիներ՝ Աննա Բաղդոյանը, Աննա Պոկոյովան, Էրիկա Դեւիսը, Ամանդա Ջեքսոնը, Սաթենիկ Մարտիրոսյանը, Քրիստինե Քեփենեկյանը, Գաննա Զարիցկան, Քուիաննա Չենին, Իվա Սերդարը, Մարտինա Զուբակը եւ Կաելա Չափդելայնը:

# Ռունին ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստն է

«Մանչեսթր Յունայթեդի» եւ Անգլիայի հավաքականի հարձակվող Ուեյն Ռունիի հետագա ճակատագրի հարցում վերջապես պարզություն մտցվեց: Հանդիպելով թիմի ղեկավարության եւ գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնի հետ եւ քննարկելով ստեղծված իրավիճակը, Ռունին հայտարարել է, որ որոշել է մնալ թիմում եւ ակումբի հետ նոր, հնգամյա պայմանագիր կնքել:

«Ուրախ եմ ակումբի հետ նոր պայմանագիր կնքել: Վերջին մի քանի օրերին շփվելով թիմի մարզիչների եւ ակումբի ղեկավարության հետ, համոզվեցի, որ իմ կարիքը շատ է զգացվում «Մանչեսթր Յունայթեդում»: Լավ եմ հասկանում, որ այս ամբողջ պատմությունից հետո ֆուտբոլասերներն այլեւս ինձ չեն սիրի: Սակայն ես մտածում էի իմ հետագա ճակատագրի մասին: Այժմ գլխավոր խնդիրն իմ նկատմամբ թիմի երկրպագուների վստահությունը վերականգնելն է», նշել է Ուեյն Ռունին:

«Դժվարին շաբաթ էր: Ուեյնին ասել էի, որ «Մանչեսթր Յունայթեդի» դռները մշտապես բաց են իր համար: Ուրախ եմ, որ նա համաձայնեց մնալ թիմում: Երբեմն, երբ դու արդեն թիմում ես, դժվար է հասկանալ, թե դա ինչպիսի նվաճում է: Կարծում եմ Ուեյնն այժմ հասկանում է, թե որքան հզոր է «Մանչեսթր Յունայթեդը»: Հուսով եմ, որ ակումբում բոլորը Ռունիին կաջակցեն», նշել է Ալեքս Ֆերգյուսոնը:

Հիշեցնենք, որ դեռեւս մեկ շաբաթ առաջ Ռունին ցանկանում էր արդեն ձմռանը հեռանալ «Մանչեսթր Յունայթեդից», որի հետ պայմանագրի ժամկետը լրանում է 2012-ի հունիսին: Նա ակումբի ղեկավարությունից տարեկան 14 մլն եվրո աշխատավարձ էր պահանջել, որը 1 մլն-ով գերազանցում է աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստ Քրիստիանու Ռոնալդուի վաստակը: Ներկայումս Ռունին տարեկան 4,77 մլն եվրո է ստանում:

Ըստ բրիտանական լրատվամիջոցների, նոր պայմանագրով Ռունին շաբաթական 250 հազար ֆունտ ստեռլինգ կստանա՝ դառնալով ֆուտբոլի պատմության մեջ ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը: Լավագույն տասնյակն այսպիսի տեսք ունի (տարեկան աշխատավարձը մլն դոլարով):

| | | |
|---|---|---|
| 1. Ուեյն Ռունի | «Մանչեսթր Յուն.» | 18,8 |
| 2. Քրիստիանու Ռոնալդու | «Ռեալ» | 16,32 |
| 3. Զլատան Իբրահիմովիչ | «Միլան» | 15,04 |
| 4. Յայա Տուրե | «Մանչեսթր Սիթի» | 13,9 |
| 5. Լիոնել Մեսի | «Բարսելոնա» | 13,16 |
| 6. Սամյուել Էտո՛Օ | «Ինտեր» | 13,16 |
| 7. Կակա | «Ռեալ» | 12,56 |
| 8. Էմանուել Ադեբայոր | «Մանչեսթր Սիթի» | 10,6 |
| 9. Քարիմ Բենզեմա | «Ռեալ» | 10,6 |
| 10. Կառլոս Տեւես | «Մանչեսթր Սիթի» | 10,07 |

# Ֆեդերերը հավասարվեց Սամփրասին

Թենիսի Ստոկհոլմի մրցաշարում հաղթելով գերմանացի Ֆլորիան Մայերին, շվեյցարացի թենիսիստ Ռոջեր Ֆեդերերն իր կարիերայում 64-րդ տիտղոսը նվաճեց եւ հավասարվեց ամերիկացի Փիթ Սամփրասին: 1968-ից սկսած մենախաղում առավելագույն թվով (109) մրցաշարերում հաղթող է ճանաչվել ամերիկացի լեգենդար թենիսիստ Ջիմի Կոնորսը: 2-րդ ցուցանիշն ունի չեխ Իվան Լենդլը (94): Լավագույն եռյակը եզրափակում է ամերիկացի մեկ այլ հանրահայտ թենիսիստ Ջոն Մաքինրոյը (77):

«Անհավանական է, որ հասա այնպիսի բարձունքի, որում իր կարիերան է ավարտել Փիթ Սամփրասը: Երբեք չես կարող գուշակել, թե երբ կնվաճես քո վերջին տիտղոսը: Ուստի յուրաքանչյուր մրցաշարում էլ ցանկանում ես հաղթել: Կարիերայի սկզբում զգում ես, որ պետք է աշխարհին ապացուցես, որ դու լավագույնն ես: Դրա համար դու պարտավոր ես ագրեսիվ լինել եւ չբավարարվել ձեռք բերածով: Այժմ հաղթանակներով ավելի շատ հաճույք եմ ստանում, քանի որ բացի ինձանից, այլեւս ոչ մեկին ապացուցելու բան չունեմ», նշել է 29-ամյա Ֆեդերերը:



# Գերշոնը միաժամանակյա խաղի նոր ռեկորդ սահմանեց

**Ծնունդով ուկրաինացի, ներկայումս Իսրայելում բնակվող 30-ամյա գրոսմայստեր Ալիկ Գերշոնը շախմատի միաժամանակյա խաղի համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց՝ գերազանցելով իրանցի Մորթեզա Մահջոբայի նախկին ցուցանիշը, որը գրանցված էր Գինեսի ռեկորդների գրքում: Թել Ավիվի կենտրոնական հրապարակում հինգշաբթի սկսված եւ ուրբաթ առավոտյան ավարտված միաժամանակյա խաղաշարը տեւեց մոտ 20 ժամ: Այդ ընթացքում նա ուժերը չափեց 525 մրցակիցների հետ: Պարտիաների 94 տոկոսն ավարտվեցին Գերշոնի հաղթանակով:**

**Գործող կարգի համաձայն, նրա բոլոր մրցակիցները պետք է լինեին Իսրայելի շախմատի ֆեդերացիայում գրանցված որպես այդ կազմակերպության անդամներ: Իրանցու ռեկորդը գերազանցելու եւ իր անունը Գինեսի ռեկորդների գրքում գրանցելու համար Գերշոնին անհրաժեշտ էր շահել պարտիաների առնվազն 80 տոկոսը: Հետաքրքրական է, որ Գերշոնի մրցակիցների մեծամասնությունը նախկին ԽՍՀՄ-ից Իսրայելում բնակություն հաստատած ռուսալեզու անձիք էին:**

ՇԱԽՄԱՏ

# Սամվել Տեր-Սահակյանը միանձնյա առաջատարն է

**Հունաստանում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում Հայաստանի 19 պատվիրակներից բոլորից հաջող է հանդես գալիս գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում նա 6 տուրից հետո վաստակել է 5,5 միավոր եւ միանձնյա գլխավորում է աղյուսակը:**

**Սամվելը հիանալի մեկնարկեց՝ տոնելով 4 անընդմեջ հաղթանակ: Նա պարտության մատնեց Նիկոլաս Գրանդադամին, Կրիշնան Պրիյադհարշանին, Իլյա Իլյուշենկոյին եւ Վասիֆ Դուրարբեյլիին: Միայն 5-րդ տուրում ԱՄՆ-ը ներկայացնող Սթիվեն Զիերկին հաջողվեց ընդհատել Սամվելի հաղթարշավը՝ ոչ-ոքի ավարտելով պարտիան: 6-րդ տուրում հայ շախմատիստը կրկին հաղթանակ տարավ՝ առավելության հասնելով Սալեհ Սալեմի նկատմամբ:**

**5-ական միավորով Սամվել Տեր-Սահակյանին հետապնդում են Սթիվեն Զիերկը եւ Անգել Արիբասը: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարի մեր մյուս մասնակից Գրիգոր Դիլանյանը 4 միավորով 24-րդ տեղում է:**

**Հաջող է հանդես գալիս նաեւ մինչեւ 12 տարեկանների մրցաշարի մասնակից Մանուել Պետրոսյանը, որը 6 հնարավորից վաստակած 5 միավորով 7-րդ տեղում է: Նա մրցաշարը սկսեց 3 անընդմեջ հաղթանակով՝ պարտության մատնելով Օմար Ալիին, Պյոտր Կարպաչին եւ Մոհապատրա Սիդհանտին: 4-րդ տուրում Պետրոսյանն անդրանիկ պարտությունը կրեց թուրք Վահապ Սանալի հետ պարտիայում: Այնուհետեւ հետեւեցին 2 հաղթանակները Էդվարդ Սոնգի եւ Բիլել Բելաչենեի նկատմամբ: Մրցաշարային աղյուսակը 5,5-ական միավորով գլխավորում են Կրժիժտոֆ Դուդան եւ Կայդեն Տրոֆը:**

**Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում 4,5 միավորով 6-րդ տեղում է Տիգրան Հարությունյանը: Նա առայժմ անպարտելի է: Տիգրանը մեկնարկում 3 անընդմեջ հաղթանակ տոնեց, ապա հաջորդ երեք տուրերում մրցակիցների հետ հաշտություն կնքեց: Աղյուսակը 6 միավորով գլխավորում է լիտվացի Թոմաս Լաուրուսասը, որին հաջորդում են 5-ական միավոր ունեցող Գրժեգորժ Նասուրան եւ Խոսլա Շիվենը:**

**Հայ շախմատիստուհիներից լավագույն արդյունքն ունեն Սուսաննա Գաբոյանը եւ Մարիա Գեւորգյանը, որոնք վաստակել են 4,5-ական միավոր:**

# ՀՀ երիտասարդական կուսակցությունն ու հսկաների ֆեդերացիան կհամագործակցեն



Երեկ «Գոլդեն Թյուլիփ» հյուրանոցում կայացավ Հայաստանի հսկաների ֆեդերացիայի եւ երիտասարդական կուսակցության համատեղ ասուլիսը, որում հայտարարվեց երկու կազմակերպությունների համագործակցության մասին: Ինչպես նշեց կուսակցության նախագահ **Վահան Բաբայանը**, այդ համագործակցությունը նախատեսում է համատեղ միջոցառումների կազմակերպում՝ ուղղված երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորմանը: Կուսակցության վարչության անդամ **Կարեն Եսայանը** նշեց, որ երկրի ամրապնդման եւ հետագա բարգավաճման համար անհրաժեշտ է ունենալ ուժեղ եւ առողջ սերունդ: Այդ նպատակով կուսակցությունը որոշել է համագործակցել հսկաների ֆեդերացիայի հետ: Կուսակցության անդամ պատանիներից կընտրվեն ուժեղագույնները, որոնք կզբաղվեն ուժային մարզաձեւերով, կկոփեն իրենց առողջությունը: Համապատասխան ծրագրեր կմշակվեն մարզերում երիտասարդության շրջանում սպորտն ու առողջ ապրելակերպը ամրապնդելու եւ մասսայականացնելու համար:

Հայաստանի հսկաների ֆեդերացիան (նախագահ՝ Արման Մովսիսյան) հիմնադրվել է 2009-ի սեպտեմբերին: Մայիսին Ստեփանակերտում անցկացվեց Հայաստանի առաջնություն ուժային էքստրիմ մարզաձեւից, որին մասնակցեցին նաեւ արցախցի մարզիկները: Իսկ հուլիսին մեր մարզիկները մասնակցեցին Մինսկում 8 երկրների մասնակցությամբ անցկացված Եվրոպայի սիրողական առաջնությանը եւ զբաղեցրին 2-րդ տեղը: Այսօր արդեն ուժային էքստրիմով զբաղվում են շուրջ 300 պատանիներ պրոֆեսիոնալ մարզիչների գլխավորությամբ:

# Ղարամյանն անդրանիկ հաղթանակը տոնեց

**Ֆրանսիայի Կապ դ' Ագդ քաղաքում ընթացող արագ շախմատի մրցաշարի 4-րդ տուրում Տիգրան Ղարամյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով վիետնամցի Լե Կուանգ Լյեմին: Իսկ ահա 5-րդ տուրում հայ շախմատիստն առաջին հաղթանակը տոնեց Տատյանա Կոսինցեւայի հետ մրցավեճում:**

**5 տուրից հետո Ղարամյանը 2,5 միավորով B ենթախմբում 4-րդ տեղում է: Աղյուսակը 4-ական միավորով գլխավորում են Վասիլի Իվանչուկն ու Լե Կուանգ Լյեմը: Իվանչուկը 2 անընդմեջ հաղթանակ տոնեց Յոն Լյուդվիգ Համերի եւ Լե Կուանգ Լյեմի նկատմամբ:**

**A ենթախմբում հիանալի է հանդես գալիս ճապոնացի շախմատիստ Հիկարու Նակամուրան, որը 100 տոկոսանոց արդյունք ունի: Հերթական հաղթանակները նա տոնեց Հուդիթ Պոլգարի եւ Սոփիե Միլիեթի նկատմամբ: 4,5 միավորով առաջատարին հետապնդում է Բու Քսյանժին, որը հաղթեց Սոփիե Միլիեթին ու Նադեժդա Կոսինցեւային: Մրցաշարում առայժմ անհաջող է խաղում աշխարհի նախկին չեմպիոն Անատոլի Կարպովը, որը վաստակել է ընդամենը 1 միավոր եւ A ենթախմբում նախավերջին՝ 7-րդ տեղում է: Այդ միակ միավորը նա վաստակեց 4-րդ տուրում՝ պարտության մատնելով Նադեժդա Կոսինցեւային:**

# Ութոտնուկ Պաուլը սատկել է

Երեկ առավոտյան գերմանական Օբերհաուզեն քաղաքում սատկել է ութոտնուկ Պաուլը, որը հայտնի էր ֆուտբոլի աշխարհի առաջնության հանդիպումների արդյունքների ճիշտ գուշակություններ կատարելով: Հիշեցնենք, որ ութոտնուկը ճիշտ էր գուշակել Գերմանիայի հավաքականի բոլոր հանդիպումների ելքը, ինչպես նաեւ չէր սխալվել աշխարհի չեմպիոնի եւ բրոնզե մրցանակակրի հարցում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Ադրբեջանական հիստերիա Թեհրանում

*1-ին էջից*

Նախ ադրբեջանական կողմը հարձակվեց հայկական պատվիրակության անդամների վրա՝ բղավելով, թե հայերը տաղավարում ներկայացրել են «իրենց հուշարձանը» (թե որ օրվանից էր «Տատն ու պապը» դարձել Ադրբեջանի հուշարձանը՝ չի կարող բացատրել անգամ այն ադրբեջանցին, որ ապրում է սուլթան Ալիեւի տված ստահոդ հայտարարություններով, թե Բաքուն աշխարհի ամենալավ քաղաքն է ու այնտեղ ապրելն ուղղակի երազանք է, կամ իրենք կարող են կրկին պատերազմել եւ այս անգամ հաղթել Հայաստանին-Հ.Հ.): Մինչ ցուցահանդեսի կազմակերպիչները ապարդյուն փորձում էին բացատրել արդեն խելագարության հասած ադրբեջանցի պատվիրակությանը, որ համաժողովին քաղաքական ենթատեքստ չեն ցանկանում տալ, ադրբեջանցիներին թիկնապահի կարգավիճակով միացան նաեւ թուրք լրագրողները:

Ադրբեջանա-թուրքական պատվիրակությունն այնպիսի աղմուկ էր բարձրացրել, որ դա գրավել էր գրեթե բոլորի ուշադրությունը: Օտարերկրյա լրագրողները մոտենում էին, հարցնում աղմուկի պատճառի մասին եւ լուսանկարում հայկական տաղավարը: Հայկական կողմը՝ փորձելով հարթել իրավիճակն ու քաղաքական ենթատեքստ չտալ բնույթով ոչ քաղաքական համաժողովին, խնդրեց ադրբեջանական պատվիրակությանը՝ միայն կազմակերպիչների կարծիքն ու մեկնաբանությունը լսելուց հետո որեւէ քայլ ձեռնարկել, սակայն այդ ժամանակ հայկական տաղավարում հայտնվեց ամենայն հավանականությամբ հոգեպես անհավասարակշիռ ադրբեջանցի լրագրողը, վիրավորական խոսքեր ուղղեց Հայաստանի եւ հայ ժողովրդի հասցեին եւ պոկեց պատին ամրացված ՀՀ եւ ԼՂՀ քարտեզները՝ ցանկանալով պատռել: Կազմակերպիչները մեծագույն ճիգերով ադրբեջանցի «գործընկերոջը» ստիպեցին հեռանալ տաղավարից:

Այն, որ ադրբեջանական կողմը դեռեւս չի սովորել խնդրի մասին խոսել հանգիստ մթնոլորտում, առանց գոռալու, մատ թափ տալու եւ հայկական ամեն ինչ ավերելու, հերթական անգամ ապացուցվեց երեկվա համաժողովում՝ իրանցի կազմակերպիչների ու մի շարք օտարերկրյա մասնակիցների ներկայությամբ:

Ի տարբերություն ադրբեջանական կամ թուրքական պատվիրակությունների, կատարվածի առնչությամբ իրանական կողմն էր հայկական պատվիրակության անդամներից փորձում ներողություն խնդրել ադրբեջանցիների անդաստիարակության համար եւ խոստանում, որ նման դեպքեր այլեւս չեն կրկնվի: Այդ դեպքից հետո այցելուների եւ մասնակից երկրների հետաքրքրությունը Հայաստանի եւ «Տատն ու պապը» հուշարձանի նկատմամբ ավելի մեծացավ, շատերն ուղղակի մոտենում էին ու խնդրում լուսանկարվել հուշարձանի նկարի հետ: Իրանական կողմը հուշարձանի ներկայությունը բացատրում էր այն հանգամանքով, թե տեղյակ չէր ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ու համոզված էր, թե «Տատն ու պապը» հայկական պետական ազգային խորհրդանիշ է, ինչպես ֆրանսիական տաղավարում ներկայացված Էյֆելյան աշտարակը: Թեպետ նրանք տաղավարի պատից հանեցին լուսանկարը, սակայն հայկական կողմի պնդմամբ այն շարունակեց մնալ հայկական տաղավարում եւ ներկայացվեց մասնակիցներին:

Երեկ ցուցահանդեսի ադրբեջանցի մասնակիցները քանիցս այցելեցին հայկական տաղավար՝ թերեւս ստուգելու, թե արդյոք տաղավարում դեռեւս ներկայացվա՞ծ է Լեռնային Ղարաբաղի խորհրդանիշ համարվող «Տատի եւ պապի» հուշարձանի վահանակը: Քանի որ ադրբեջանցիների կողմից հարձակում էր տեղի ունեցել Հայաստանը ներկայացնող տաղավարի վրա, ցուցահանդեսի կազմակերպիչ իրանական կողմը որոշեց փոփոխել տաղավարի վահանակները՝ նշված խորհրդանիշ-հուշարձանի փոխարեն տեղադրելով մեկ այլ նկար:

Իրանական կողմն այս քայլը բացատրել է որպես հայկական պատվիրակության անվտանգության ապահովման միջոց: Բացի Լեռնային Ղարաբաղի խորհրդանիշը պատկերող ցուցանակները հանելուց, իրանական կողմը նաեւ տեղափոխել է Հայաստանը ներկայացնող տաղավարը ավելի հեռու՝ կրկին դա բացատրելով անվտանգության նկատառումներով: Այդուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի խորհրդանիշը պատկերող փոքրիկ վահանակը մնաց տաղավարում, ու թեեւ ադրբեջանցիները հաճախակի այցելում էին տաղավար, նրանք այլեւս որեւէ քայլ չէին նախաձեռնում:

Ադրբեջանցիների տգեղ արարքը դատապարտել են ցուցահանդեսի գրեթե բոլոր մասնակիցները, որոնց ուշադրությունը Հայաստանը ներկայացնող տաղավարի նկատմամբ մեծացել էր: Հայկական տաղավարը ներկայացնող լրագրողներից հարցազրույց են վերցրել երկու իրանական հեռուստաընկերություններ՝ խնդրելով ամենայն մանրամասնությամբ ներկայացնել տաղավարում ցուցադրված տեղեկությունները:

Հ.Գ. «Տատն ու պապը» հուշարձանի հայկական լինելու մասին գիտեն նաեւ ռուսները: Անցյալ տարի Մոսկվայում անցկացված «Եվրոտեսիլ» երգի միջազգային փառատոնի ժամանակ Հայաստանը ներկայացնող խորհրդանիշների թվում էր նաեւ «Տատն ու պապը»: Այդ ժամանակ էլ ադրբեջանական հիստերիան հաղթեց, եւ մրցույթի հաջորդ օրերի ընթացքում հուշարձանը Հայաստանի մասին պատմող տեսահոլովակում չէր երեւում, սակայն վերոնշյալ դեպքերը այն փաստի ապացույցն են, որ Արցախում ամեն մի հուշարձան, քաղաք կամ եկեղեցի միջազգային հանրությունը ներկայացվում է հայկական՝ ստիպելով Ադրբեջանին անընդհատ գործի դնել ձայնալարերն ու գոռալ անհնարինի մասին:

# ՀԱՊԿ-ը կհամալրվի ամենաժամանակակից ռազմական տեխնիկայով

Երկուշաբթի օրը Ռուսաստանի Չելյաբինսկի շրջանում ավարտվեցին ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի մասնակցությամբ ընթացած «Փոխգործակցություն-2010» զորավարժությունները: Ավարտին կազմակերպության գլխավոր քարտուղար **Նիկոլայ Բորդյուժան** հանդես է եկել մի շարք հայտարարություններով. «ՀԱՊԿ անդամ պետությունների զինվորական ստորաբաժանումները կհամալրվեն ամենաժամանակակից ռազմական տեխնիկայով, այդ թվում՝ նորագույն ոչ մահացու զինատեսակների մոդելներով», «ՌԻԱ Նովոստի» գործակալության փոխանցմամբ՝ նշել է Բորդյուժան: Գլխավոր քարտուղարը նկատել է, որ ոչ մահացու զինատեսակները նախատեսված են զինծառայողների պաշտպանության համար. «Դրանց թվում են ծխածածկույթի համակարգեր, լուսաձայնային նռնակներ, որոնք կիրառվելու են առաջին հերթին մեր պետությունների զինծառայողների պաշտպանության համար», ասել է Բորդյուժան: Անդրադառնալով Չելյաբինսկում ընթացած զորավարժություններին՝ գլխավոր քարտուղարը ընդգծել է, որ ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերում ներառված են հատուկ ստորաբաժանումներ, որոնք լավագույնն են անդամ պետությունների զինված ուժերում. «Ես վստահ եմ, որ ժամանակի ընթացքում հավաքական ուժերի ստորաբաժանումները կշարունակվեն համալրվել օպերատիվ արձագանքման զինամթերքով ու հեռակառավարման տեխնիկայով, ինչը կխթանի մեզ գործել միասնական ու հաջող ամեն մի իրավիճակում», եզրափակել է Նիկոլայ Բորդյուժան:

Հ. Ա.

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն թվականի նոյեմբերի 14-ին Առնո Բաբաջանյանի անվան փոքր դահլիճում (Աբովյան փող. 2) տեղի կունենա **«Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ»** պատմաազգագրական ՀԿ-ի հիմնադիր ժողովը: Տեղեկությունների համար զանգահարել՝ հեռ. 52-42-38, 098 77-11-00, 091 77-12-00:

*Նախագահ՝ Մ. Չիլինգարյան*

WWW. azg.am

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, համաձայն իր գործող կանոնադրության եւ ՀՀ ԳԱԱ անդամների ընտրության կարգի, հայտարարում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսների եւ թղթակից անդամների ընտրություններ՝ հետեւյալ մասնագիտությունների գծով.

| Ակադեմիկոսներ | |
|---|---|
| 1. Մաթեմատիկա | 1 |
| 2. Քիմիա | 1 |
| 3. Կենսատեխնոլոգիա | 1 |
| 4. Պատմութիւն | 1 |
| 5. Իրավագիտություն | 1 |
| 6. Տնտեսագիտություն | 1 |

| Թղթակից անդամներ | |
|---|---|
| 1.Մեխանիկա | 1 |
| 2. Ինֆորմատիկա | 1 |
| 3. Էներգետիկա | 1 |
| 4. Աստղաֆիզիկա | 1 |
| 5. Լազերային ֆիզիկա | 1 |
| 6. Կոնդենսացված միջավայրի ֆիզիկա | 1 |
| 7. Պլազմայի ֆիզիկա | 1 |
| 8. Ֆիզիկական քիմիա | 1 |
| 9. Ֆիզիկական եւ անօրգանական քիմիա | 1 |
| 10. Օրգանական քիմիա | 1 |
| 11. Երկրաբանություն | 1 |
| 12. Մոլեկուլային կենսաբանություն | 1 |
| 13.Մոլեկուլային կենսաբանություն, կենսաֆիզիկա | 1 |
| 14. Գիտություն շրջակա միջավայրի մասին | 1 |
| 15. Կենսաքիմիա | 1 |
| 16. Բուսաբանություն | 1 |
| 17. Պատմություն | 1 |
| 18. Արեւելագիտություն | 1 |
| 19. Լեզվաբանություն | 1 |
| 20. Գրականագիտություն | 1 |
| 21. Արվեստագիտություն | 1 |
| 22. Տնտեսագիտություն | 1 |

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ընտրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, որոնք գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող եւ միջազգային ճանաչում ստացած աշխատանքներով, իսկ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականները, որոնք գիտությունը հարստացրել են առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող աշխատանքներով:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի եւ թղթակից անդամի թեկնածությունների առաջադրման իրավունքը վերապահվում է ՀՀ ԳԱԱ անդամներին (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները իրավունք ունեն առաջադրելու ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների թեկնածուներին, իսկ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամները՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների թեկնածուներին), պետական գիտական կազմակերպություններին, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններին, ինչպես նաեւ պետության մասնակցությամբ գործող գիտահետազոտական կազմակերպություններին: Առաջադրման իրավունք ունեցող կազմակերպությունները յուրաքանչյուր տեղի համար կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Թեկնածուների առաջադրումը կատարվում է գիտական եւ գիտատեխնիկական խորհուրդների նիստերում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի եւ թղթակից անդամի թեկնածուները կարող են առաջադրվել եւ քվեարկվել միայն մեկ մասնագիտության գծով:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների թեկնածուների առաջադրումները համապատասխան հիմնավորմամբ եւ թեկնածուի գրավոր համաձայնությամբ ներկայացվում են ՀՀ ԳԱԱ նախագահություն՝ ընտրությունների անցկացման մասին հայտարարության հրապարակումից հետո մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի եւ թղթակից անդամի թեկնածության առաջադրմանը կից անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝ մեկ օրինակից.

գիտական, գիտատեխնիկական խորհրդի որոշումը կամ նամակ թեկնածուի առաջադրման մասին՝ համապատասխան հիմնավորմամբ,

քաղվածք թեկնածության առաջադրման նիստի արձանագրությունից՝ նշելով մասնագիտությունը, որի գծով առաջադրվում է թեկնածուն եւ քվեարկության արդյունքները,

ինքնակենսագրություն (ձեռագիր),

կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

գիտական աշխատությունների ցուցակ,

գիտական աշխատանքների մասին ամփոփում, գիտական ամսագրերում հրատարակված գրախոսականների եւ գիտական կարծիքների պատճենները,

բարձրագույն ուսումնական հաստատության, գիտական աստիճանների դիպլոմների եւ գիտական կոչման ատեստատի պատճենները,

բնութագիր աշխատանքի վայրից,

լուսանկար 4,5x6 սմ չափսի:

Նշված փաստաթղթերը ներկայացնել հետեւյալ հասցեով.

Հայաստանի Հանրապետություն, 0019, Երեւան-19, Մարշալ Բաղրամյանի պող. 24, ՀՀ ԳԱԱ նախագահության կադրերի բաժին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, հողի սեփականատեր **Ռուբիկ Աբգարյանի**, ոռոգման նպատակով մեկ խորքային հորից 5 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 01.11.2010 թ., ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում գործող **Երեւանի պետական համալսարանի Ծաղկաձորի ուսումնական բազայի** խմելու-կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 1,8 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. նոյեմբերի 2-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 26.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: